

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Oqnuտոս

2021թ.

Յ Գորիս Ջ

31.08.2021

Հայտարարվում է մրցույթ «Գործիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսների եւ արտադրության վարպետի թափուր տեղերի համար

Հայտարարվում է մրցույթ «Գործիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսների և արտադրության վարպետի թափուր տեղերի համար՝

Հ/հ	ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԸ	ԾԱՆԴԱԲԵ ՌԵՎԱԾՈՒ ԹՅՈՒՆԸ	ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
1	«Անգլերեն» առարկայի դասախոս	1000 ժամ	Բարձրագույն կրթություն՝ անգլերեն լեզվի մանկավարժի որակավորմամբ
2	«Ֆիզիկա» առարկայի դասախոս	254 ժամ	Բարձրագույն կրթություն՝ ֆիզիկայի մանկավարժի որակավորմամբ
3	«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության մասնագիտական մոդուլների դասախոս	473 ժամ	
4	«Համակարգիչների շահագործում» մասնագիտության մասնագիտական մոդուլների դասախոս	450 ժամ	Բարձրագույն կրթություն՝ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի մանկավարժի որակավորմամբ

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը:

Յուրաքանչյուր մասնակցին պատրաստվելու համար տրվելու է մինչև 15 րոպե ժամանակ իսկ պատասխանը արձանագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից:

Մրցույթին մասնակցելու համար անձը հաստատություն է ներկայացնում ներքոնշյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում
- 2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
- 3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- 5) ինքնակենսագրություն
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝
Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
բացառությամբ՝

Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8)

Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9)

հրատարակված հողվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2)

դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից,

3)

տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված այնպիսի հիվանդությամբ,

որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը,

4)

դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի,

երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից սկսած 10

աշխատանքային օրվա ընթացքում մինչև **սեպտեմբերի 13-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչև 15.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 24-ին ժամը 14.00-ին** «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզի, ք. Գորիս, Հայկազունիների փող. 4 հասցե:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-78-22-79, 094-59-54-18
հեռախոսահամարներով:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/haytaravum-e-mrtsuyt-gorisi-petakan-qolej-poak-i-dasakhosneri-e%D6%82-artadrutyanyan-varpeti-tapur-tekheri-hamar>

30.08.2021

Գնել Սանոսյանը Միսիանի քաղաքապետարանում ներկայացրել է համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանին

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանն այսօր այցելել է Սյունիքի մարզ, Միսիանի քաղաքապետարանում աշխատակազմին, համայնքի ավագանուն և համայնքային ենթակայության կառույցների

ղեկավարներին է ներկայացրել համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանին:

Հանդիպմանը ներկա էին Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը, տարածաշրջանից ընտրված պատգամավոր Կարեն Համբարձումյանը:

Նախարարը շնորհակալություն է հայտնել համայնքի նախկին ղեկավարին՝ պաշտոնավարման ընթացքում համայնքի աշխատակազմի հետ համատեղ իրականացրած աշխատանքի համար՝ համոզմունք հայտնելով, որ Սիսիան բազմաբնակավայր համայնքում նախանշված աշխատանքները կշարունակվեն:

Շնորհավորելով Արմեն Հակոբջանյանին պաշտոնի ստանձնման կապակցությամբ՝ նախարար Սանոսյանը մաղթել է պատասխանատվություն և եռանդ՝ շահ համայնքի և նրա բնակիչների աշխատելու և դրված նպատակներն իրագործելու համար:

Համայնքի ավագանուն և աշխատակազմին Գնել Սանոսյանը հորդորել է համայնքի ղեկավարի պաշտոնակատարի հետ համախմբված աշխատել և ծառայել բնակիչներին՝ անկախ համայնքի ղեկավարի փոփոխության հանգամանքից և անկախ իրենց քաղաքական հայացքներից: Նախարարն ընդգծել է, որ նախքան համայնքի ղեկավարի ընտրությունների կազմակերպումը այս ժամանակահատվածում Սիսիանում և համայնքի մյուս բնակավայրերում նախանշված աշխատանքները պետք է կանգ չառնեն և իրականացվեն ամբողջ ծավալով:

«Կարծում եմ՝ պետք է փորձենք նոր աչքերով նայել մեր աշխատանքին, նոր եռանդով լծվել աշխատանքի, վեր հանենք եղած խնդիրները, մեր անելիքները և փորձենք նորովի լուծել դրանք», - նշել է Գնել Սանոսյանը՝ հավելելով, որ համայնքում ծրագրերի հաջող իրականացման և առկա խնդիրների լուծման գրավականը համայնքապետարանի և պետական գերատեսչությունների համատեղ աշխատանքն ու համագործակցությունն է:

Համայնքի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանը շնորհակալություն է հայտնել վստահության համար և նշել, որ կան արդեն իսկ իրականացված աշխատանքներ և կան կիսատ գործեր: Նա պատրաստակամություն է հայտնել համայնքի հետ միասին ջանք ու եռանդ ներդնել համայնքի խնդիրների լուծման և այդ ծրագրերն արդյունավետ իրականացնելու ուղղությամբ:

Աղբյուրը՝

<https://www.facebook.com/MinistryTerritorialAdministrationInfrastructureRA/posts/1839278816245182>

27.08.2021

Գորիս-Կապան ճանապարհին որևէ անցակետ չի տեղակայվել

Գորիս-Կապան ճանապարհին որևէ անցակետ չի տեղակայվել: Այս մասին [«Արմենպրես»](#)-ին հայտնել է ԱԱԾ Սահմանապահ զորքերի հրամանատար գնդապետ Արման Մարալյանը՝ մեկնաբանելով լրատվամիջոցներում տարածված այն տեղեկատվությունը, թե իբրև Գորիս-Կապան ճանապարհին տեղակայվել է ռուսադրբեջանական անցակետ:

«Որնէ անցակետ տեղակայված չէ: Ճանապարհը բացվել է, երթևեկությունը վերականգնվել է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար», - հայտնեց գնդապետ Արման Մարալյանը:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1061821.html>

27.08.2021

Կապան-Գորիս ճանապարհը բացվել է հայտնում է Կապանի քաղաքապետը

Կապան-Գորիս ճանապարհային հատվածը բացվել է: «Արմենպրես»-ի հետ զրույցում այս մասին ասաց Կապանի քաղաքապետ Գևորգ Փարսյանը:

«Ճանապարհը նոր է բացվել, շուտով երթևեկությունը կվերականգնվի», - ասաց Փարսյանը:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1061814/>

27.08.2021

Պահի գլխավոր խնդիրը՝ ինչպե՞ս հասնել Որոտան, Շուռնուխ եւ Բարձրավան գյուղեր

Գորիս-Կապան ավտոմայրուղում ստեղծված ճգնաժամի հետեւանքով առանձնապէս դժվար պայմաններում են հայտնվել Գորիս համայնքի Որոտան, Շուռնուխ եւ Բարձրավան գյուղերը...

Մ-2 մայրուղով, հասկանալի է, հնարավոր չէ հասնել այդ գյուղեր: Ճանապարհն արգելափակված է եւ՝ Էյվազլար գյուղում (երկու տեղ), եւ՝ Կարմրաքարում:

Ինքներս փորձեցինք գտնել Գորիսի հանրությանը լրջագույնս մտահոգող հարցի պատասխանը՝ ինչպե՞ս գնալ Որոտան, Շուռնուխ եւ Բարձրավան:

Այսօր՝ օգոստոսի 27-ին, որոշեցինք մեկնել այդ գյուղեր: Գնացինք Խոտ գյուղով, այնուհետեւ՝ Խազալ կապով...

Մոտ 10 կմ երկարությամբ այդ ճանապարհը կառուցվել է 1960-ականներին՝ Տաթեւ հէկ-ի շինարարության ժամանակ:

«Մյուսյաց երկիր» պարբերականի՝ Տաթեւ հէկ-ի գործարկման 50-ամյակին նվիրված հատուկ համարում Ժորա Մանուցյանը պատմում է՝

«1962 թ. սկսվեց Խազալ կապից Որոտանի ափ ճանապարհի շինարարությունը: ...Տեղանքի ռելիեֆն ուներ շատ բարդ կառուցվածք՝ բարձրադիր ու ցածրադիր լեռներ, ձորեր ու ձորակներ, գառիթափներ... Մի քանի ամիս անց լեռան բարձունքից մինչեւ Որոտան ձգվեց ասֆալտապատ ճանապարհը: Եվ օրական հարյուրավոր մեքենաներ էին Կապանից երթևեկում այդ ճանապարհով, իսկ բեռնատարները Որոտանի ձախ ափին կառուցվող հէկ-ի համար նյութեր, հումք եւ օժանդակ միջոցներ էին տեղափոխում»:

Տաթեւ հէկ-ի շինարարության ավարտից հետո, սակայն, ճանապարհն անտերության է մատնվել եւ տարիների ընթացքում հայտնվել ծայրահեղ անմխիթար վիճակում:

Խոտի մերձակայքում գտնվող օրվա կարգավորիչ ջրամբարից մոտակա այգիների համար բաց թողնված ջրերը, ցավոք, շատ դեպքերում հոսում են ուղիղ ճանապարհով՝ այգետերերի քմահաճության պատճառով: Դրա հետեւանքով էր, որ տարիներ առաջ ճանապարհի մի հատվածը սողանքի պատճառով փլուզվեց ամբողջովին: Հետո, իհարկե,

գրունտային ճանապարհի բացեցին, որը գործում է մինչև հիմա, բայց եւ հարմար է հատկապես ամենագնաց մեքենաների համար:

Մեր այցի ընթացքում դժվար չէր նկատել, որ մեկ-երկու օր առաջ այդ ճանապարհին ինչ-որ բուլդոզեր է աշխատել, սակայն դժվարանցանելի տեղերն այդպես էլ մնացել են նույն վիճակում:

Լեռան գագաթից իջնող մոտ 10 կմ երկարությամբ ճանապարհն անցնելուց հետո դուրս եկանք Մ-2 մայրուղի (Որոտան գյուղի եւ Տաթեւ հէկ-ի մերձակայքում):

Բայց, գյուղ գնալուց առաջ, որոշեցինք Մ-2 միջպետական ճանապարհով նախ շարժվել դեպի արեւելք, որտեղ իրար հարեւանությամբ ՌԴ սահմանապահների եւ Ադրբեջանի՝ մարտական դիրքեր հիշեցնող հսկիչ կետերն են:

Այդտեղ մայրուղին ինչ-որ առարկաներով փակ էր, եւ մենք, բնականաբար, կանգ առանք:

Անմիջապես մոտեցան դիմակավորված եւ զինված ռուս սահմանապահները:

Մի քանի մետր այն կողմ էլ ադրբեջանցի զինվորներն անմիջապես հավաքվեցին՝ հավանաբար տեսնելու, թե ինչ մեքենա է ժամանել:

Ռուս սահմանապահը վտանգավոր համարեց մեր այնտեղ գտնվելը եւ հորդորեց անմիջապես հեռանալ: Իսկ որեւէ հարց տալ կամ լուսանկարահանումներ կատարել՝ արգելեց, այլապես դա կարող էր դիտվել կարգի խախտում՝ տհաճ հետեւանքներով...

Մենք հեռացանք երկու պետության՝ միմյանց հարեւանությամբ գտնվող հսկիչ կետերից ու ճամփա բռնեցինք դեպի Որոտան գյուղ:

Որոտանում, բարեբախտաբար, հանգիստ վիճակի ականատես եղանք...

Այնտեղ նաեւ հանդիպեցինք դրսեկ մասնագետների, ովքեր Տաթեւ հէկ-ում վերազինման աշխատանքներ են իրականացնում եւ Գորիս քաղաքի հետ հաղորդակցվում են Խազալ կապի ճանապարհով:

Որոտանից հետո ճանապարհը չշարունակեցինք Թասի լեռնանցքով. ցավալի էր տեսնել, որ երբեմնի բանուկ մայրուղին ամբողջովին դատարկ է՝ ոչ մի մեքենա... Հսկիչ կետի ռուս սահմանապահն էր մեզ հորդորել՝ ձեռնպահ մնալ Շուռնուխ մեկնելուց, քանզի լեռնանցքի գագաթին (Մազրա գյուղի խաչմերուկում)՝ ՌԴ սահմանապահների հենակետի դիմաց, կարող էին եւ ադրբեջանցիներ լինել:

Մենք վերադարձանք Որոտանից: Հետ դարձանք նույն ճանապարհով:

Խոտ գյուղից Խազալ կապ ձգվող ճանապարհին հանդիպեցինք մի անձնավորության, ով գեոդեզիական (երկրաբաշխական) աշխատանք էր կատարում: Ըստ գեոդեզիստի՝ եկող շաբաթվանից հիմնանորոգման աշխատանքներ կսկսվեն Խոտ-Խազալ կապ-Որոտան ճանապարհին, որն Էյվազլարը շրջանցող միակ ճանապարհն է:

Հ.Գ.

Թեւեւ դեպի Շուռնուխ ճանապարհը չշարունակեցինք, բայց տեղեկացանք, որ ԱԻՆ-ի մեքենան հաց է հասցրել է՛ւ Շուռնուխ, է՛ւ Բարձրավան. այդ մեքենան նույնպես Որոտան է հասել Խազալ կապով:

Իմացանք նաեւ, որ Շուռնուխ-Բարձրավան ճանապարհային կապը գործում է ու անվտանգ է:

Ի դեպ, Բարձրավան գյուղն էլ այլընտրանքային ճանապարհ ունի: Տաթև-Կապան վերաշինվող ճանապարհից (Մալդաշ-Քաշունիի խաչմերուկից) կարելի է թեքվել դեպի արեւելք եւ մոտ 10 կմ երկարությամբ լեռնային ճանապարհով՝ Հարսնաձորի լեռնագագաթով եւ Կատարիի ստորոտով հասնել Բարձրավան: Այդ ճանապարհը, սակայն, դժվարանցանելի է եւ հրատապ վերանորոգման կարիք ունի՝ գոնե թերեւակի:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/pahi-glkhavor-khndiry-inchpes-hasnel-orotan-shurnukhe%D6%82-bardzravan-gyukher>

27.08.2021

Գորիսի արեւմտյան դարպասներից՝ Զանգերից մինչեւ Ծակեր բեռնատարների կուտակումներ են, իսկ Ծակերից հետո թույլատրելի չէ երթել եկել Մ-2-ով

Այսօր առավոտյան «Սյունյաց երկիր»-ը ծանոթանում էր Մ-2 միջպետական մայրուղու՝ Գորիս համայնքի տարածքով անցնող հատվածում ստեղծված վիճակին:

Գորիս քաղաքի արեւմտյան մատույցներից խոշոր բեռնատար մեքենաների կուտակումներ են...

Իսկ Գորիս-Կապան մայրուղու սկզբնամասում՝ Քարահունջի խաչմերուկից քիչ ներքեւ, ուստիկանական հսկիչ կետն է. Գորիսի ուստիկանները թույլատրեցին առաջ շարժվել մինչեւ հաջորդ եւ գլխավոր հսկիչ կետ:

Ամիսներ առաջ կարգված այդ հսկիչ կետում ուժեղացված ծառայություն էր...

ԱԱԾ սահմանապահների հետ ուստիկաններն են:

Հսկիչ կետի պատասխանատուն չի թույլատրում որեւէ լուսանկարչական աշխատանք կատարել: Նա բացառում է նաեւ հետագա մեր առաջխաղացումը՝ դեպի Ծակեր, որտեղից՝ մոտ 500 մ հեռավորությամբ գտնվում է ՌԴ սահմանապահների հենակետը՝ հարեւանությամբ ադրբեջանցիների՝ երկու օր առաջ կարգված հսկիչ կետի:

Ադրբեջանցիների հսկիչ կետից է իբր սկսվում Կուբաթլուի շրջանի Էյվազլար գյուղի վարչական տարածքը. դա Մ-2 մայրուղու հայտնի 3,5 կիլոմետրն է, որից հետո ճանապարհը նորից մտնում է Հայաստանի տարածք:

Ծակերի մերձակայքում գտնվող հայկական հենակետից քիչ հյուսիս (դեպի Գորիս) կուտակված բեռնատարների կողքին նաեւ Իրանի Իսլամական Հանրապետություն մեկնող ավտոբուսներն են՝ իրանցի ուղեւորներով...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/gorisi-are%D6%82mtyan-darpassnerits-zangerits-minche%D6%82-tsaker-bernatarneri-kutakumner-en-isk-tsakerits-heto-tuylatreli-cherche%D6%82ekel-m-2-ov>

26.08.2021

Կապան-Գորիս ճանապարհի բացման շուրջ բանակցություններն այսօր ավարտվել են, ճանապարհը շարունակում է փակ մնալ. Փարսյան

Կապան-Գորիս ավտոճանապարհի՝ ադրբեջանցիների կողմից փակ հատվածները բացելու շուրջ եռակողմ բանակցություններն այսօր ավարտվել են, ճանապարհները շարունակում են փակ մնալ: Այս մասին [NEWS.am](https://www.news.am)-ի հետ զրույցում հայտնեց Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը:

Թե որքան է հավանականությունը, որ բանակցություններն արդյունք կտան, և կհաջողվի բացել ադրբեջանցիների կողմից փակված կենսական նշանակության ավտոճանապարհները, Փարսյանը չմեկնաբանեց:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/660050.html>

26.08.2021

Սննդամթերքի ու բժշկական ծառայությունների հասանելիությունը լրջորեն սահմանափակվել է գյուղերի բնակչության համար. ՄԻՊ

Մասնավորապես, էականորեն սահմանափակվել է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ, Որոտան Բարձրավան գյուղերի, Կապան համայնքի Նոր Առաջաձոր գյուղի թաղամասի կապը ՀՀ մյուս բնակավայրերի հետ՝ ադրբեջանական զինված ծառայողների կողմից Գորիսից Կապան միջպետական ճանապարհը երկու հատվածներով անօրինական փակելու պատճառով:

Ադրբեջանական զինված ծառայողների բացահայտ հանցավոր արարքների պատճառով լրջորեն սահմանափակվել է գյուղերի քաղաքացիական բնակչության (այդ թվում՝ երեխաներ, կանայք, տարեցներ) ազատ տեղաշարժը:

Գյուղերում առաջացել են սննդամթերքի ու առաջին անհրաժեշտության ապրանքների, բժշկական ծառայությունների հասանելիության լրջագույն սահմանափակումներ՝ մարդկանց կանգնեցնելով հումանիտար ճգնաժամի իրական վտանգի առաջ:

Գյուղերում քաղաքացիական բնակչության անվտանգությունն ապահովելու և աջակցելու հարցերում անփոխարինել աշխատանք են տանում ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի ծառայողները:

Այս բոլոր փաստերը հաստատվել են գյուղերից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի երևանյան կենտրոնական և Սյունիքի մարզային ստորաբաժանում ներկայացվող ահազանգերով ու կատարված ուսումնասիրություններով:

Ուստի, ադրբեջանական զինված ծառայողները պարտավոր են անհապաղ բացել ճանապարհն ամբողջությամբ, դադարեցնել հանցավոր արարքներով մարդկանց, քաղաքացիական բնակչության իրավունքների զանգվածային խախտումները:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Armenianombudsman/posts/1771473629706760>

26.08.2021

Գորիս-Կապան միջպետական մայրուղին փակ է...

Հենց նոր վերադարձանք Կարմրաքարից. Մ-2 մայրուղի-Դավիթբեկ գյուղ խաչմերուկում ամիսներ առաջ կարգված հսկիչ կետն ուժեղացված է:

Մեր ոստիկանների, ԱԱԾ սահմանապահների հետ նաեւ ռուս սահմանապահներն են՝ հետեւակի մարտական մեքենայով...

Կարմրաքարից այն կողմ անցնել չի թույլատրվում:

Չի թույլատրվում նաեւ լուսանկարահանումներ անել. ռուս սպան խորհուրդ է տալիս այդ հարցով դիմել Կարմրաքարում գտնվող հրամանատարությանը:

Ոստիկանական մեկ ուրիշ հսկիչ կետ էլ Մ-2 մայրուղի-Մյունիք բնակավայրի խաչմերուկում է: Մայրուղու այդ մասից էլ սկսվում է բեռնատարների խցանված շարքը, որ առաջացել է օգոստոսի 25-ի գիշերվանից...

Իսկ թե ինչ է կատարվում մայրուղու Կարմրաքար-Չայգամի-Շուռնուխ հատվածում՝ կարող ենք հիմք ընդունել ՀՀ վարչապետի քիչ առաջ հնչեցրած հայտարարությունն առ այն, թե իբր՝ ըստ աղբբեջանական կողմի՝ հայ զինվորները դանակահարել են աղբբեջանցի զինվորների, ինչն իրականությանը չի համապատասխանում: Այդ պատճառով էլ, իբր, արգելափակել են մայրուղին Չայգամիի հատվածում:

Վարորդները եւ ուղեւորներն անհամբեր սպասում են խնդրի կարգավորմանը:

Խնդիրն այն է, որ մեծ բեռնատար մեքենաները չեն կարող երթել եկել Կապան-Տաթև-Մ-2 մայրուղով: Ասել է թե՛ Կապան-Գորիս մայրուղին Հայաստանի գլխավոր արյունատար երակն է, որը պետք է անհապաղ վերաբացվի:

Հ.Գ. -1

Նրանք, ովքեր պարբերաբար երթելեկում էին Գորիս-Կապան ավտոմայրուղով՝ տեսնում էին ճանապարհի արեւելյան եզերքին օր առ օր աղբբեջանցիների կողմից ծնվող ինժեներական կառույցները: Եվ, կարծեք, ոչ սովորական այդ երեւոյթը ոչ ոքի չէր անհանգստացնում: Կապանից Գորիս հասնելու համար (կամ՝ հակառակը) առնվազն ութ տեղ պետք է անցնել աղբբեջանցիների հենակետերի ուղիղ հայացքի ներքո: Դա՛ միայն տեսանելի դիրքերում, իսկ թե քանի նման դիրքեր կամ հենակետեր կան անտառում, լեռների եւ բլուրների հետնամասերում՝ ոչ ոք չի կարող ասել:

Ստեղծվել էր մի վիճակ, երբ Գորիս-Կապան մայրուղու վրա՝ առնվազն մի քանի տեղ, թուրքերը կարող են մայրուղին շրջափակել: 2021 թ. օգոստոսի 25-ի գիշերը սկիզբ առած ճգնաժամը դրա հերթական ապացույցն է:

Հ.Գ.-2

Անպատասխան է մնում սյունեցիներիս հետաքրքրող գլխավոր հարցերից մեկը՝ կա՞րողյոք պայմանավորվածություն՝ հայտնի երեք կողմի միջեւ, որով կարգավորվում է կամ պիտի կարգավորվի Մ-2 մայրուղու Գորիս-Կապան հատվածում երթելեկության անվտանգությունը:

Աղբբուրը՝ <https://syuniacyerkir.am/goris-kapan-mijpetakan-mayrukhin-pak-e>

26.08.2021

Աղբբեջանցիները դեռ կոնկրետ որեւէ բան չեն պահանջում, ճանապարհը շարունակում է փակ մնալ. Կապանի քաղաքապետ

Կապան-Գորիս միջպետական ճանապարհը շարունակում է փակ մնալ, աղբբեջանցիները դեռ կոնկրետ որեւէ բան չեն պահանջում: Այս մասին ասաց Կապանի քաղաքապետ Գեւորգ Փարսյանը:

«Բանակցությունների ընթացքում աղբբեջանցիներն ասել են, որ ճանապարհը փակելու պատճառը այն է, թե իբր երկու հայ զինճառայող հարձակվել են աղբբեջանցի զինճառայողի վրա եւ նրան սվինով հարվածել: Սա, իհարկե, բացարձակ անհեթեթություն է», - պատմեց նա:

Հիշեցնենք, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը հերքել էր հայ զինճառայողի մասնակցությամբ այդ միջադեպը. «Նշված տեղեկությունը բացարձակ կեղծիք է եւ

աղբբեջանական կողմի հերթական ապատեղեկատվությունը: ՀՀ ԶՈՒ զինծառայողների մասնակցությամբ նման միջադեպ տեղի չի ունեցել»,- հայտնել էր ՊՆ-ն:

Կապանի քաղաքապետն ասաց, որ ճանապարհը բացելու համար նոր բանակցություններ են սպասվում. «Ներկա են հայկական եւ ռուսական սահմանապահ զորքերը»:

Փարսյանն նաեւ նշեց, որ աղբբեջանցիները ճանապարհը փակել են օգոստոսի 25-ի երեկոյան ժամը 20:00-ից:

«Այդ հատվածում մեր քաղաքացիներն էին՝ իրենց ավտոմեքենաներով, բայց ռուս սահմանապահների ուղեկցությամբ դուրս են եկել: Տուժածներ չկան»,- ասաց Փարսյանն ու հավելեց, որ խաղաղ բնակչության տարհանում չի իրականացվում:

Աղբբուրը՝ <https://m.shamshyan.com/hy/article/2021/08/26/1194592/>

26.08.2021

Աղբբեջանական կողմը փակել է Կապան-Գորիս միջպետական ճանապարհի Կարմրաքար-Շուռնուխ հատվածը. ԱԱԾ

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը տեղեկացնում է, որ օգոստոսի 25-ին ժամը 23:00-ի սահմաններում աղբբեջանական կողմը փակել է Կապան-Գորիս միջպետական ճանապարհի Կարմրաքար-Շուռնուխ հատվածը:

«Նշված հատվածում գտնվող տրանսպորտային միջոցները տարհանվել են: Աշխատանքներ են իրականացվում ճանապարհը բացելու, մարդկանց և տրանսպորտային միջոցների տեղաշարժի բնականոն աշխատանքը վերականգնելու ուղղությամբ»,-

Ասված է ԱԱԾ-ի տարածած հաղորդագրության մեջ:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը կոչ է անում հետևել միայն պաշտոնական լրահոսին:

Աղբբուրը՝

<https://www.1lurer.am/hy/2021/08/26/%D4%B1%D5%A4%D6%80%D5%A2%D5%A5%D5%BB%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%B8%D5%B2%D5%B4%D5%A8-%D6%83%D5%A1%D5%AF%D5%A5%D5%AC-%D5%A7-%D4%BF%D5%A1%D6%80%D5%B4%D6%80%D5%A1%D6%84%D5%A1%D6%80-%D5%87%D5%B8%D6%82%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%AD-%D5%B0%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A1%D5%AE%D5%A8/543567>

26.08.2021

Աղբբեջանցի 50-ից ավելի զինծառայողներ փակել են Գորիս-Կապան ճանապարհը Դավիթ Բեկի մոտ, հրաժարվում են բացել. ՄԻՊ

Աղբբեջանական 50 կամ ավելի զինված ծառայողներ 3 ժամից ավելի փակել են Սյունիքի մարզի Գորիսից Կապան տանող միջպետական ճանապարհը՝ Դավիթ Բեկ գյուղին մոտ: Հրաժարվում են բացել:

Այս արարքները հանցավոր են, սահմանափակել են մարդկանց, ողջ քաղաքացիական բնակչության, այդ թվում՝ երեխաներ, կանայք, տարեցներ, ազատ տեղաշարժը: Այս ամենը

հավաստող ահազանգեր ենք ստանում քաղաքացիական բնակիչներից, ստուգել ենք ամբողջը:

Այդքան զգուշացնում եմ այս վտանգի մասին ու ասում եմ, թե պետությունը ինչ պետք է անի ու հրատապ անի. ադրբեջանական զինված ծառայողների ներկայությունը ՀՀ Սյունքի համայնքների միջև ճանապարհներին հանցավոր է և վերջ: Դա ինքին խախտում է մարդկանց կյանքի, ազատ տեղաշարժման և միջազգայնորեն երաշխավորված այլ կենսական իրավունքներ:

Փաստերից ինձ համար ակնհայտ է, որ սա նախապես պլանավորված բացահայտ հանցագործություն է ՀՀ քաղաքացիական բնակչության դեմ:

Տեղյակ եմ, որ ՌԴ սահմանապահ ծառայողները, ՀՀ սահմանապահները նույնպես տեղում վարել են ճանապարհը բացելու բանակցություններ, և քաղաքացիական մեքենաները դուրս են բերվել:

Ըստ ստուգված տվյալների՝ բանակցությունները առավոտ են շարունակվելու. հրաժարվել են բացել:

Վաղ առավոտյան այս միջադեպով հատուկ հաղորդումներ կուղարկվեն համապատասխան միջազգային մարմիններին:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Armenianombudsman/posts/1770892889764834>

25.08.2021

Ձանգեզուրի պղնձամոլիբդենային ռուս բաժնետերն ընդդեմ մյուսների. նա ցանկանում է, որ իրեն օտարվի ՋՊՄԿ-ի 75 տոկոսը

Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 12.4 տոկոսի բաժնետեր «Ձանգեզուր մայնինգ» ընկերությունը, որի վերջնական սեփականատերը Ռուսաստանի առողջապահության ու սոցիալական զարգացման նախկին նախարար Միխայիլ Չուրաբովն է, դատական չորս հայցեր է ներկայացրել կոմբինատի ու նրա մյուս բաժնետիրոջ դեմ: Հայցերից երկուսով Չուրաբովը պահանջում է համապատասխան առքուվաճառքի գործարքը, որով «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն հետ է գնել կոմբինատի բաժնետոմսերի շուրջ 75 տոկոսը, անվավեր ճանաչել, իսկ մյուս երկուսը վերաբերում են նախապատվության իրավունքով այդ բաժնետոմսերը ձեռք բերելուն:

«Ձանգեզուր մայնինգի» շահերը դատարանում հուլիսից ներկայացնում է «Կոնցեռն դիալոգ» ընկերությունը, մասնավորապես՝ փաստաբաններ Արամ Օրբեյանն ու Նարինե Բեզլարյանը: Միխայիլ Չուրաբովը պղնձամոլիբդենայինում բաժնեմաս ձեռք էր բերել 2020-ին՝ «Ձանգեզուր մայնինգի» և Կիպրոսում գրանցված Wanlort Finance Limited ընկերության միջոցով: Հետագայում կոմբինատը գերմանական «Քրոնիմետ մայնինգից» ու մեկ այլ բաժնետեր՝ «Մաքուր երկաթի գործարանից» հետ [գնեց](#) բաժնետոմսերը՝ ունենալով 75 տոկոսի բաժնետոմսեր (41.2 միլիարդ դրամի): Ինչպես վերը նշեցինք, մյուս 12.4 տոկոսի բաժնետերը Չուրաբովն է, իսկ ևս 12.5 տոկոս պատկանում է «ԱՄՓ հոլդինգ» ընկերությանը, որի բաժնետերերն են Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի եղբայրը՝ Կարեն Հակոբյանը, ՋՊՄԿ նախկին գլխավոր տնօրեն Մհեր Պոլոսկովն ու Գուրգեն Ամբարյանը՝ Պոլոսկովի տեղակալը:

«Զանգեզուր մայնինգը», բացի դատարանից ԶՊՄԿ-ի 75 տոկոսի առքուվաճառքի գործարքը անվավեր ճանաչելը, երկու նոր հայցերով պահանջում է նախապատվության հիմքով իրացնել այդ բաժնետոմսերը «Զանգեզուր մայնինգին»:

«Դատարանից խնդրում ենք նախապատվության իրավունքի հիման վրա ԶՊՄԿ-ից հետ վերցնել 75 տոկոսի բաժնետոմսերն ու վաճառել «Զանգեզուր մայնինգին», - «Լուրերին» ասաց ընկերության շահերի ներկայացուցիչ Նարինե Բեգլարյանը:

Նրա խոսքով՝ թեև ներկայում կոմբինատի բաժնետոմսերի 75 տոկոսը պատկանում է հենց ԶՊՄԿ-ին, սակայն դրանք «չքվեարկող» բաժնետոմսեր են. «Իրականում չնայած ֆիզիկապես գոյություն ունեցող բաժնետոմսեր են 75 տոկոսը, սակայն կառավարման տեսանկյունից ընկերության կառավարմանը մասնակցում են մյուս երկու բաժնետերերի բաժնետոմսերը, երբ ընկերությունը տիրապետում է ինքն իր բաժնետոմսերին, այլևս չի կարող քվեարկել», - նշեց Բեգլարյանը: Վերջինիս խոսքով՝ ԶՊՄԿ-ին պատկանող 75 տոկոսի բաժնետոմսերը, օրենսդրության համաձայն, ժամանակի ընթացքում կամ պետք է վաճառվեն մեկ այլ անձի, կամ պետք է մարվեն:

«Զանգեզուր մայնինգի» կողմից մյուս հայցը ներկայացված է «ԱՄՓ հոլդինգի», «Սթար դասթ» ՓԲԸ-ի ու սեփականատերերի՝ Մհեր Պոլոսկովի, Կարեն Հակոբյանի ու Նարեկ Ամբարյանի դեմ (տիրապետում են ԶՊՄԿ-ի բաժնետոմսերի 12.5 տոկոսը). «Այս հայցը առնչվում է «ԱՄՓ հոլդինգ» ընկերության կողմից կոմբինատում մասնակցության անուղղակի իրացմանը, որի դեպքում, ըստ մեր պնդման, նույնպես պետք է կիրառելի լինի նախապատվության իրավունք», - ասաց Բեգլարյանը: Այլ կերպ ասած՝ «Զանգեզուր մայնինգը» դատարանից պահանջում է, որպեսզի կոմբինատի մյուս բաժնետեր «ԱՄՓ հոլդինգը», դրա հետ կապակցված «Սթար դասթ» ՓԲԸ-ն, Մհեր Պոլոսկովը, Կարեն Հակոբյանն ու Նարեկ Ամբարյանը կոմբինատի 12.5 տոկոս բաժնետոմսերը վաճառելու դեպքում նախևառաջ գնման նախապատվությունը տան Զուրաբովի ընկերությանը:

Այս գործով արդեն հայցի ապահովման միջոց է ընտրվել ու [արգելանք](#) է դրվել «Սթար դասթ» ընկերության բաժնեմասի վրա: «Լուրերը» նախկինում [անդրադարձել էր](#) այդ արգելանքին:

ԶՊՄԿ պաշտոնական կայքում դատական գործընթացների մասին տեղեկություններ դեռևս առկա չեն:

Աղբյուրը՝

<https://www.1lurer.am/hy/2021/08/25/%D4%B6%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A5%D5%A6%D5%B8%D6%82%D6%80%D5%AB-%D5%BA%D5%B2%D5%B6%D5%B1%D5%A1%D5%B4%D5%B8%D5%AC%D5%AB%D5%A2%D5%A4%D5%A5%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%D5%AB-%D5%BC%D5%B8%D6%82%D5%BD-%D5%A2%D5%A1%D5%AA%D5%B6%D5%A5%D5%BF%D5%A5%D6%80%D5%B6-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%A4%D5%A5%D5%B4-%D5%B4%D5%B5%D5%B8%D6%82%D5%BD%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B6%D5%A1-%D6%81%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7-%D5%B8/542981>

24.08.2021

ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցիչների հետ քննարկվել է Արցախից տեղահանված ընտանիքների խնդիրները

Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը ընդունել է ՄԱԿ-ի ([#ՄԱԿՓԳՀ](#)) Փախստականների գործակալության գործառնությունների գծով ավագ ղեկավար Ալմազ Բուրկուտովին և արտաքին կապերի համակարգող Անահիտ Հայրապետյանին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Արցախից տեղահանված և համայնքում հյուրընկալված ընտանիքների խնդիրներն ու ներկա իրավիճակը: Մտքեր են փոխանակվել նաև աջակցության և համայնքի կարողությունների հզորացման տարբեր ուղղությունների ու առաջնային բնագավառների շուրջ:

Ջրուցակիցներն ընդգծել են նաև կողմերի միջև շարունակական արդյունավետ համագործակցության կարևորությունը՝ Կապանում ընթացիկ և ապագա ծրագրերի իրականացման գործում:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/923989354861210>

23.08.2021

Սյունիքում մեկնարկել է արոտների ջրարբիացման համակարգերի կառուցման աշխատանքը

Սյունիքի մարզի 7 բնակավայրում մեկնարկել է արոտների ջրարբիացման համակարգերի կառուցման աշխատանքը: Շուրջ 7,1 կմ ջրագծի, 9 խմոցի, 2 փարախի և հովվի 4 տնակի կառուցման համար կառավարությունը հատկացրել է 112 մլն դրամ:

Արման Խոջոյան (ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ) - Այսօր Սյունիքի մարզում ակնհայտ է տեսնել, թե ինչպես են նմանատիպ կառույցները նպաստում, որ արոտները դառնան օգտագործելի: Դա մի քանի խնդիր է լուծում՝ օգտագործման տարածքների, չղեկարգված տարածքները՝ չօգտագործելի լինելու պատճառով:

Տոլորս բնակավայրի վարչական ղեկավարը նշում է՝ նոր ջրախմոցներն անհամեմատ կրթեթևացնեն գյուղացու առօրյա հոգսը:

Մարատ Առաքելյան (Տոլորս բնակավայրի վարչական ղեկավար) - Ջրախմոցների առավելությունն այն է, որ կեսօրին անասունը ջուր է խմում, նորից գնում է արոտի, կաթնատվությունն է բարձրանում, երեկոյան ժամին նորից անասունը ջուրը վերցնում, իջնում է գյուղ: Ջրախմոցի հիմնական նպատակն այն է, որ կաթնատվությունը բարձրանում է, եկամուտներն է շատանում գյուղացիների:

Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրով մի շարք այլ աշխատանքներ ևս կատարվում են: Դեռ ապրիլին՝ Բալաք, Շինուհայր և Շուռնուխ համայնքների «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 3 տրակտոր, իսկ աշնանը՝ մարզի Շաղատ, Շուռնուխ, Անգեղակոթ և Նժդեհ համայնքների կոոպերատիվներին կտրամադրվի 7 գյուղտեխնիկա, այդ թվում՝ 1 տրակտոր և 1 բեռնատար ավտոմեքենա:

Արման Խոջոյան - Սյունիքի մարզում շուրջ 20 համայնք ընդգրկված են ծրագրում, սակայն արդարացիորեն պետք է նշել, որ միայն 12-ն են, որ ակտիվ են: Ծրագրով

նախատեսվում է նաև անհրաժեշտ գյուղտեխնիկայի ձեռքբերում և օգտագործում, կարծես մենք աշխատում ենք ամբողջ շղթայով:

Գյուղատնտեսական արտադրողների և վերամշակողների կարողությունների բարձրացման նպատակով Սյունիքի մարզի՝ Մեղրի, Գորիս և Սիսիան համայնքների 4 տնտեսավարողների հետ կնքվել են նաև նպատակային ֆինանսավորման պայմանագրեր՝ շուրջ 81 մլն դրամ ընդհանուր արժեքով, որից 50 մլն դրամն արդեն տրամադրվել է, իսկ մնացածը տարվա ընթացքում կտրամադրվի չրերի արտադրության, կաթի վերամշակման և բնական հյութերի արտադրության նպատակով:

Աղբյուրը՝

<https://www.1lurer.am/hy/2021/08/23/%D5%8D%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%84%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B4%D5%A5%D5%AF%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%A1%D6%80%D5%B8%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BB%D6%80%D5%A1%D6%80%D5%A2%D5%AB%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%A8/541794>

23.08.2021

Լին Թրեյսին մասնակցել է Սիսիանի պատմության թանգարանի խանութի բացման արարողությանը

Դեսպան Թրեյսին Սյունիքի մարզում մասնակցեց Սիսիանի պատմության թանգարանի խանութի բացման արարողությանը: Թանգարանի ու խանութի շրջայցից գատ, դեսպան Թրեյսին նաև հաճույքով շրջեց Սիսիանի տեսարժան վայրերով: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող և Սմիթսոնիան ինստիտուտի կողմից իրականացվող «Իմ Հայաստան» ծրագիրն աջակցել է Սիսիանի պատմության թանգարանին՝ մի շարք զբոսաշրջային պրոդուկտների մշակման և թանգարանի խանութի գործարկման հարցում:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/usembarmenia/posts/10159600213312673>

23.08.2021

Խաղաղ ու համերաշխ Կապանում տոնի կազմակերպումն անհրաժեշտություն էր. համայնքը դուրս է գալիս հետպատերազմյան անորոշությունից

Օգոստոսի 21-ին Կապանի տոնը նշվեց «Ապահով Կապան, հուսո հանգրվան» խորագրով և սկսվեց համաքաղաքային կրոսավազքով: Մարզական միջոցառմանը մասնակցում էին դպրոցականներ՝ տարիքային երկու խմբով: Արամ Մանուկյան փողոցից («Կապան-մոլ» հանրախանութի մատույց) մեկնարկած կրոսավազքն ավարտվեց Շահումյանի հրապարակում, որտեղ Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը պարզների արժանացրեց մրցանակային տեղեր զրավածներին:

Տոնակատարության հաջորդ կանգառը ճակատեն գյուղ տանող ճանապարհի հարակից բարձունքն էր: Այդտեղ փողփողում էր Հայոց եռագույրը, որի շուրջ միասնական շուրջպար բռնեցին տարբեր տարիքի և զբաղմունքի կապանցիներ:

Տափարակի վրա Կապան խոշորացված համայնքի բնակավայրերն իրենց տաղավարն էին կազմակերպել՝ ծանրաբեռ աշնանային (և ոչ միայն) բարիքներով: Յուրաքանչյուրն իր հյուրասիրությունն էր առաջարկում: Կապանի համայնքապետը, տոնակատարության հյուրերը մոտենում էին սեղաններին, բարեմաղթանքի խոսքեր հղում, որևէ բան ճաշակում...

Այդտեղից տոնակատարության մասնակիցներն ուղղություն վերցրեցին դեպի Բաղաբուրջի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Արցախյան երեք պատերազմների մասնակից կապանցի նահատակների հիշատակին:

Կեսօրից հետո օրվա խորհրդին պատշաճող հանդիսավոր նիստ տեղի ունեցավ Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում: Իրենց շնորհավորանքում Կապան քաղաքի օրն արժևորեցին և ներկաներին ողջերթի խոսքեր հղեցին Կապանի պատվավոր քաղաքացի Լիաննա Հակոբյանը, Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը: Իսկ մինչ այդ ներկայացվեց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար Վարդապետ Հակոբյանի շնորհավորական խոսքը, որն ընթերցեց Վահանավանքի հոգևոր հովիվ տեր Ավետիք քահանա Մարտիրոսյանը:

44-օրյա պատերազմի օրերին դրսևորած նվիրումի և պատրաստակամության համար մի ստվար խումբ անձինք համայնքապետի կողմից արժանացան պատվոգրի և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից թողարկված հուշադրամի:

Հանդիսականի համար ելույթ ունեցան Կապանի մշակույթի կենտրոնի ժողովրդական նվագարանների անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ Վիգեն Հովհաննիսյան), մենակատարներ՝ Հասմիկ Մարտիրոսյան և Էմիլ Հարությունյան: Հանդես եկան նաև պարային կոլեկտիվներ՝ «Զանգեզուր» ժողովրդական պարի խումբը (գեղարվեստական ղեկավար՝ Վահագն Գասպարյան), «Դայմոնդ» պարային խումբը (գեղարվեստական ղեկավար՝ Ադուն Հովհաննիսյան): Կապանցիներին տոնի առթիվ մայրաքաղաքից շնորհավորելու էր եկել «Վալենս» ժողովրդական պարի համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Վահագն Գասպարյան, պարուսույց՝ Խաչատուր Չորչողյան):

Տոնական օրը ցուցադրություններ էին կազմակերպվել Կապանի երկրագիտական և Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարաններում:

Քաղաքի օրը նաև կարմիր ժապավեն կտրվեց. այդ իրավունքը վերապահվեց Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանին: Իր դռները բացեց Կապանի արվեստի թանգարանը, որի տնօրեն Բորիկ Մինասյանը հակիրճ ներկայացրեց թանգարանի հիմնադրման պատմությունը, այն երախտավորներին, ովքեր նպաստել են մշակութային այդ օջախի կայացմանը: Արվեստի սիրահարներին հարուստ ցուցադրանք էր ներկայացված. թանգարանի մի սրահում ներկայացված էին նրա ֆոնդում պահպանվող գեղանկարիչների գործերից, իսկ հիմնականում կապանցի տարբեր սերունդների ստեղծագործողների (նաև արտերկրում բնակվող) աշխատանքներն էին, որոնք որոշակի պատկերացում տվեցին նրանց ստեղծագործական նախասիրությունների մասին:

Արվեստին առնչվող միջոցառումներն այսքանով չսահմանափակվեցին:

Կապանցիներին երաժշտական տոն էր սպասվում Կապանի արվեստի պետական քոլեջի Վահագն Ստամբուլյանի անվան վերանորոգված և նոր շուք ստացած դահլիճում, որտեղ հանդես եկավ Հայաստանի վաստակավոր կոլեկտիվ Կոմիտասի անվան պետական լարային քառյակը: Այս հանրաճանաչ կամերային անսամբլը մեկ անգամ չէ, որ հանդես է եկել մեր քաղաքում: Հանդիսականները ջերմ ծափողջույններով դիմավորեցին քառյակի անդամներին. առաջին ջութակ՝ ՀՀ ժողովրդական արտիստ, պետական և միջազգային մրցույթների դափնեկիր, պրոֆեսոր Էդուարդ Թադևոսյան, երկրորդ ջութակ՝ միջազգային մրցույթների դափնեկիր Սյուզի Երիցյան, ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր Ալեքսանդր Կոսեմյան (ալտ), հանրապետական մրցույթների դափնեկիր Անժելա Մարգարյան (թավջութակ): Նախ հնչեց Առնո Բաբաջանյանի լարային կվարտետը, այնուհետև՝ Կոմիտասի մանրանվագները՝ քառյակի անդրանիկ կազմի թավջութակահար Սարգիս Ասլամազյանի մշակմամբ: Մանրանվագների շարքից համերգի ավարտին հնչեց «Վաղարշապատ» պարը:

Տոնը շարունակվում էր Գարեգին Նժդեհի հրապարակում. ցուցադրություն-վաճառք էր կազմակերպվել, մարզկենտրոնի կազմակերպությունները և անհատ ստեղծագործողները ներկայացրել էին իրենց աշխատանքները:

Հրապարակում հավաքված մարդիկ սպասում էին գալա-համերգին, որը տեղի ունեցավ սպասված հյուրերի՝ Արթուր Բեսթի, Արծվիկ Հարությունյանի, Գևորգ Հարությունյանի մասնակցությամբ:

Տոնակատարությունը եզրափակվեց բացօթյա դիսկոտեկով և հրավառությամբ:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/khakhakh-u-hamerashkh-kapanum-toni-kazmakerpumn-anhrazheshtutyun-er-hamaynqy-durs-e-galis-hetpaterazmyan-anoroshutyunits>

23.08.2021

«Օտաերս են մեղք, ծառերս, ջուր են ուզում». Հայաստանի հարավում այգիները չորանում են

Շվանիձոր, Ալվանք, Նոնաձոր գյուղական եւ Մեղրի, Ագարակ քաղաքային բնակավայրերում 1352 ջրօգտագործող կա: Ոռոգվում է 478 հա տարածք, բայց 25 օր է, ինչ տարածաշրջանում ոռոգման ջուր չկար: Համայնքի ղեկավար պաշտոնակատար Արարատ Թումանյանը տարվա այս սեզոնին օրն սկսում է ավարտում է գյուղական բնակավայրերում: Միայն Նոնաձորում 46 ջրօգտագործող մշակում է 146 հա այգի: Այգիների բերքով են հոգում իրենց ապրուստը: Ջուր չկա, ամեն օր ահազանգում էին՝ իրենց խոսքով «վերեններում նստողներին»:

Հարցը լուծում է ստացել վարչապետի խորհրդական, Սյունիքի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Ղուկասյանի միջնորդությամբ: Պոմպակայանի վերանորոգման համար կառավարությունից 10 մլն դրամի մոտ գումար է հատկացվել: Նորոգեցին, ջուրը տվեցին, բայց սոցկայքերում լուսանկարներ հայտնվեցին, որ Նոնաձորում ոռոգման ջուր չկա: Համայնքի ղեկավարի պաշտոնակատարը շտապում է Նոնաձոր՝ առաջարկելով միանալ նրան:

«Որ երկու հատ շարժիչ տեղադրեցին ու էդքանից հետո մեղքը գցել պետության վրա, որ պետությունը մեզ փող չի տվել՝ խաբեն: Փաստացի վարչապետի խորհրդականը՝ Ռոբերտ Ղուկասյանը գումարը տվեց, ասեցին երեք օրում կսարքեն, ասաց՝ մեկ շաբաթում սարքեք:

Ինչ գրել են՝ տվել է, անգամ մեկ մեխը, 20 լիտր բենզին: Բայց եկավ տեսավ, ոչինչ չեն արել : Հիմա մեղադրել պետությանը, որ գյուղացուն թողել է առանց ջուր՝ արտուրդ է»,–ասում է նոնաձորցի Մկրտիչ Բոյաջյանը:

Նոնաձորում դեռ չմեծացած նոները ճաքել՝ վարդի նման բացվել են: Այգեգործը չի կարողանում հասկանալ, թե ջուրը չտված՝ ջրօգտագործողների ընկերությունը ի՞նչ գումար է ուզում գանձեն: «Ասում են՝ մուծեք, որ դոտացիա ստանաք, որ կարողանանք ջուր տանք, այն դեպքում, երբ մեր գյուղը պարտք չի»,–ասում է Մկրտիչ Բոյաջյանը:

Երեկոյան արդեն ազարակցիներն էին բողոքում՝ պատրաստվում էին միջպետական ճանապարհը փակել: Արցախյան պատերազմի մասնակից Մանվել Վարդանյանը այգու չորացած ծառերն է ցույց տալիս: Ասում է՝ ծառերը չորանում են, պտուղը չի մեծանում, մթերողները չեն վերցնում:

Պոմիդորի, բիբարի, սմբուկի ցանքերն է ցույց տալիս՝ խնդրելով նկարել, որ «երեւաններում տեսնեն»: «Սրանք հլա հեչ, բան չեմ ասում, ծառերս են մեղք, ծառերս, ջուր են ուզում»: Մանվելի հարեւանն էլ համոզված է՝ ինչ–որ մեկը խանգարում է, որ իրենց ջուր տան: «Բա ո՞նց են բացատրում, հենց գանգում ենք Երեւան՝ կառավարություն, ստեղծից ասում են մի ժամից ջուրը կլինի: Փաշինյանին խաբում են, ինչքան հլա հանրապետական լինի մի տեղ պաշտոնի՝ երկրի վիճակը սենց է լինելու»,–ասում է Մանվել Վարդանյանը:

Աղբյուրը՝ <https://a1plus.am/hy/article/410864>

19.08.2021

Այսօր քննարկվել են հանրակրթության առնչվող հարցեր. գրուցակիցը Լեռնիկ Պետրոսյանն էր

Աղբյուրը՝ <https://youtu.be/-Ngc5bEtotc>

19.08.2021

Մ-2 մայրուղու՝ Մեղրիով անցնող հատվածը նոր եւ բարեհարմար տեսք է ստանում

Վաստակաշատ ճանապարհաշինարար Ազատ Գասպարյանի աշխատասենյակում՝ պահարանի մի հարկաբաժնում, տարբեր տարիներին ընկերության՝ տնտեսական հաջողության համար ստացած պարգևներն են՝ հանրապետական և միջազգային մրցանակներ, որոնք մեկուկես տասնյակից ավելի են: Ընկերության ղեկավարն ունի նաև կոչումներ՝ Մեղրի քաղաքի պատվավոր քաղաքացի եւ այլն:

Դրանք ճանաչում են բերել շինարարին, բայց անչափելի է այն սերն ու հարգանքը, որ վայելում է Ազատ Գասպարյանը՝ որպես Մեղրուն նվիրված անձնավորություն (ինքն արմատներով Ապարանի շրջանից է եւ բուհն ավարտելուց հետո է գործուղմամբ եկել Մեղրի ու նվիրվել նրա հող ու ջրին):

Եվ այժմ դժվար է հաշվել, թե որքան ճանապարհ է կառուցել եւ հիմնանորոգել նրա ղեկավարած ընկերությունը՝ նաև վերափոխելով պրոֆիլը՝ կառուցել սոցիալ-մշակութային օբյեկտներ (դպրոց, հիվանդանոց, բազմաբնակարան շենք, հանդիսությունների սրահ եւ այլն):

Շատ կարելուր հանգամանք է, երբ գրուցակիցդ իր գործի գիտակն ու նվիրյալն է, ուրեմն սպառիչ է համակողմանի տեղեկատվություն ստանալու հնարավորություն ունենք, ինչից էլ փորձեցինք օգտվել:

Արդեն ձեւավորված ավանդույթ է. նախ՝ տնօրենին հանդիպել նրա աշխատասենյակում, նախնական գրույց ունենալ, նոր միայն այցելել շինհրապարակներ, որտեղ Մեղրու ճանապարհաշինարարներն են...

Տնօրենը տեղեկացնում է, որ այս տարի հանրապետության կառավարությունը ֆինանսական լուրջ միջոցներ է հատկացրել Մ-2 միջպետական ճանապարհի՝ Վայոց ձորից մինչև Իրանի սահման ընկած տարբեր հատվածներում՝ իրականացնելու հիմնանորոգումներ և միջին նորոգումներ (դրանց մի մասին «Սյունյաց երկիրը» անդրադարձել է նախորդ համարներում):

«Մեղրու ճանապարհների շահագործման և շինարարության ձեռնարկություն» ՄՊ ընկերության տնօրենից հետաքրքրվեցինք ձեռնարկության ընթացիկ տարվա գործերով, որոնք գոհացուցիչ են և ընդօրինակման արժանի:

Ի դեպ, մեղրեցի ճանապարհաշինարարի «ձեռագրին» ծանոթացանք քաղաքի մուտքից սկսած՝ մայրերին նոր շարված եզրաքարեր, ճանապարհի ասֆալտի թարմ շերտ, ճամփեզրին աշխատող մարդիկ:

Մեղրեցի ճանապարհաշինարարներն օգոստոսի 3-ից գլխավորապես զբաղված են Մ-2 մայրուղու հիմնանորոգմամբ, որն ընդգրկում է քաղաքի մուտքից մինչև Մեղրու բժշկական կենտրոնը՝ ընդհանուր առմամբ 4 կմ 165 մ երկարությամբ ճանապարհահատվածը: Այդ հատվածը մեծածավալ աշխատանքներ է ներառում (խոսքը վերաբերում է ճանապարհի կողքով հոսող Մեղրի գետի հենապատի խարխուլ հատվածների վերակառուցմանը, անձրևաջրերի ստորգետնյա խողովակների անցկացմանը՝ ողջ ճանապարհի երկարությամբ, մայրերի կառուցմանը, ընդ որում՝ մայրերը պատվելու են ձևավոր սալիկներով):

Մեր այցելության պահին ճանապարհաշինարարներն ավագակոպճային խառնուրդով ճանապարհի եզրերն էին ամրացնում:

Մի խոսքով, քաղաքի միջով անցնող միջպետական ճանապարհը համապատասխանեցնում են պահանջվող չափանիշներին: Հիմնանորոգման ավարտ է սահմանված նոյեմբերի 30-ը, և ոչ մի կասկած, որ նախատեսված ժամկետում ու որակով Մեղրի քաղաքով անցնող ճանապարհի հիմնանորոգումը կավարտի:

Սա նոր բան չէ Ազատ Գասպարյանի աշխատանքային պրակտիկայում՝ առանց գրոհայնության, բայց և որակով...

Մեղրու ճանապարհաշինարարների մի մասին էլ մայր գետի՝ Արաքսի հարևանությամբ հանդիպեցինք: 1970-ական թվականներին կառուցված սահմանային եզրապատը քայքայվել, շարքից դուրս է եկել: Հիմա ամրացնում են դա, որի վրա նորից տեղադրում են սահմանային կառուցվածքները:

Վերը նշեցինք, որ ընկերությունը մասնագիտացել է շինարարության այլ ուղղություններով ևս. այս անգամ տեղեկացանք, որ բազմաբնակարան շենք ու հանդիսությունների սրահ են կառուցում Ագարակում:

Իրականացնում են նաև ավապաշտպան աշխատանքներ, քանզի Արաքսը ողողում-թուլացնում է ճանապարհին հարող հատվածը.

Դե իսկ ճանապարհների սպասարկումն ու նշագծումն իրականացվում են տարին կլոր...

Ազատ Գասպարյանը նաև հաճելի գրուցակից է: Նրա հետ կարելի է գրուցել ամենատարբեր թեմաների շուրջ: Այս անգամ ուզեցինք իմանալ նրա կարծիքը գործազրկության մասին: Ասենք այնպես է ստացվել, որ Հայաստան անասնապահներ Տաջիկստանից են բերում, մինչդեռ...

«Ինձ մոտ բանվորի պակաս չկա, բայց մեղրեցի բանվոր չկա, մարդը չի ուզում աշխատել, ընկերությունում այս պահին 75 մարդ է աշխատում, ճանապարհաշինանարների մեջ քիչ տոկոս են կազմում մեղրեցիները», - ասում է գործի մարդը:

Հիմա ազգովի մտահոգված ենք Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումներով, որում առանցքային տեղ է զբաղեցնում երբեմն գոյություն չունեցած Զանգեզուրի միջանցքի վերաբացման ցնորամտությունը: Ուստի եւ չէինք կարող չճշտել Ազատ Գասպարյանի վերաբերմունքն այդ խնդրին:

- Միջանցքի մասին որեւէ խոսակցություն չի կարող լինել, ինչը քանիցս հայտարարել է վարչապետը, խոսքը հաղորդակցության ուղիների ապաշրջափակման մասին է, ինչին ես համաձայն եմ, բայց պայմանով, որ դրանով հայոց ինքնիշխանությունը չխախտվի, այսինքն վերաբացվող ճանապարհը կամ երկաթուղին բացառապես լինեն Հայաստանի Հանրապետության իշխանության ներքո, - ասաց Ազատ Գասպարյանը:

Դա, ըստ մեր գրուցակցի, կնպաստի տնտեսական կյանքի ակտիվացմանը...

Ազատ Գասպարյանը շատ է կարեւորում Իրանի Իսլամական Հանրապետության հետ համագործակցության տնտեսական բաղադրիչը:

- Մեր ընկերությունն էլ այդ համագործակցության շնորհիվ կարողանում է ներկրել ցեմենտ, մագուր, բիտում եւ շինարարական այլ նյութեր, ընդ որում՝ համեմատաբար մատչելի գներով, - նշում է ՄՊ ընկերության տնօրենը:

Հետաքրքրվեցինք նաև, թե ի՞նչ մտահոգություն ունի ճանապարհաշինության ոլորտում մեծ համբավ ունեցող անձնավորությունը:

«Ճանապարհը հիմնանորոգվում է, ամեն բաղադրիչ տեսանելի է շինարարին ու ինքն այդ հիվանդոտ մասերն անպայման բուժում է, բայց դա չի նշանակում, որ ծանրաքաշ մեքենաների երթևեկությունն այդ ճանապարհահատվածով իր ազդեցությունը չի թողնում: Որոշում եղավ, որ 2021 թ. հունիսի 1-ից հսկողություն սահմանվի ծանրաքաշ մեքենաների երթևեկության վրա՝ միջպետական ճանապարհով, բայց առայսօր դա չեմ տեսնում, էլի նույն խոշոր բեռնատարը 25-28 տոննա բեռ բարձած Մեղրու լեռնանցքով անցնում է Քաջարան ու Կապան, ինչի պատճառով ճանապարհն օրեցօր դեֆորմացվում է: Այս խնդիրը չլուծվեց, ինչ ուզում ես, արա, ճանապարհը շարքից դուրս է գալու», - մտահոգություն է հայտնում մեր գրուցակիցը եւ հավելում, - սա եմ համարում հիմնախնդիրներից գլխավորը:

Ինչ խոսք՝ ոչ մի հիմնանորոգում սպասված արդյունքը չի տա, եթե արվածը, ինչպես հարկն է, ճիշտ չօգտագործվի ու չպահպանվի:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/m-2-mayrukhu-mekhriov-antsnokh-hatvatsy-nor-e%D6%82-bareharmar-tesq-e-stanum>

16.08.2021

**Հայ դիրքապահները կանխել են Սև լճի հատվածում Ադրբեջանի առաջխաղացման փորձը.
հակառակորդն ունի առնվազն 1 զոհ**

Օգոստոսի 16-ի գիշերը ադրբեջանական ՁՌԻ ստորաբաժանումները սադրանքի են դիմել հայ-ադրբեջանական սահմանի Սյունիքի մարզի, մասնավորապես՝ Սև լճի հատվածում՝ փորձելով դիրքային առաջխաղացում ապահովել: Այս մասին հայտնեցին ՀՀ պաշտպանության նախարարությունից:

Հայ դիրքապահներն իրականացրել են հակազոռո գործողություններ, ինչի արդյունքում հակառակորդը հետ է շարտվել ելման դիրքեր: Ծավալված փոխհրաձգության ընթացքում հակառակորդը սվել է առնվազն մեկ զոհ: Հայկական կողմից տուժածներ չկան:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1060833/>

16.08.2021

Ադրբեջանի զինված ուժերը կրակել են Սյունիքի Արավուս գյուղի ուղղությամբ. ՄԻՊ

Այսօր վաղ առավոտյան ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են սահազանգեր այն մասին, որ այս գիշեր ժամը 12-ից 1-ի սահմաններում ադրբեջանական զինված ուժերը կրակոցներ են արձակել Սյունիքի մարզի Արավուս գյուղի ուղղությամբ:

Այս տեղեկությունները Մարդու իրավունքների պաշտպանին հաստատել են գյուղի բնակիչները և պնդել, որ նշանառու կրակոցներ են արձակվել նաև ՀՀ զինված ուժերի դիրքերի վրա:

Խոսքն Արավուս գյուղի այն հատվածի մասին է, որտեղ ադրբեջանական զինված ուժերը տեղակայված են քաղաքացիական տներից մի քանի հարյուր մետր հեռու:

Նրանց անմիջապես դիմաց են տեղակայված ՀՀ զինված ուժերը, որոնք կատարում են բնակիչների կյանքն ու անվտանգությունը պաշտպանելու գործառույթ:

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հավաքագրած փաստերի՝ ադրբեջանական կրակոցները դադարել են Տեղի համայնքային մարմինների, ՀՀ 1-ին բանակային կորպուսի և ՌԴ սահմանապահ ծառայության հրամանատարության ժամանումից հետո:

Արավուս գյուղի ուղղությամբ ադրբեջանական այս գիշերվա կրակոցները հանցավոր են, խաթարում են մարդկանց բնականոն, խաղաղ կյանքն ու անվտանգությունը:

Այս փաստերն ապացուցում են, որ ադրբեջանական զինված ուժերի ներկայությունն ինքնին ՀՀ գյուղերի անմիջական հարևանությամբ և համայնքների միջև ճանապարհներին մարդկանց կյանքի իրավունքի է խախտում է: Նրանք խախտում են նաև մարդկանց սեփականության, ազատ տեղաշարժի և մյուս կենսական իրավունքները:

Ակնհայտ է, որ մարդկանց իրավունքները հնարավոր կլինի ապահովել միայն անվտանգության գոտու պայմաններում:

Արման Թաթոյան

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան

Աղբյուրը՝ <https://artsakhpress.am/arm/news/148534/adrbejani-zinvats-uzhery-krakel-ensyuniqi-aravus-gyuxi-uxxutyamb%E2%80%A4-mip-y-ahazanger-e-stacel.html>

13.08.2021

Զանգեզուրի պղնձամոլիբդենային բաժնետոմսերի մի մասի վրա կալանք է դրվել

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բաժնետոմսերի մի մասի վրա կալանք է դրվել: Այդ մասին տեղեկանում ենք իրավաբանական անձանց էլեկտրոնային ռեգիստրից:

Ըստ այդ տվյալի՝ օգոստոսի 4-ից արգելանք է դրվել կոմբինատի 2061253 հատ բաժնետոմսերի վրա: Թե ինչ քրեական գործի շրջանակում է կիրառվել բաժնետոմսերի կալանքը, չի նշվում: Բացի այս, կալանք է դրվել պղնձամոլիբդենային կոմբինատի 12.5 տոկոսի բաժնետեր «Զանգեզուր մայնինգ» ընկերության՝ կոմբինատում ունեցած բաժնետոմսերի վրա:

Ըստ ընկերության իրական սեփականատերերի ռեգիստրի [տվյալների](#)՝ «Զանգեզուր մայնինգ»-ի բաժնետերը Ռուսաստանի առողջապահության ու սոցիալական զարգացման հարցերի նախկին նախարար Միխայիլ Ջուրաբովն է, որն իր բաժեմասը ձեռք է բերել 2020-ին՝ կիպրական Walnort Finance Limited ընկերության միջոցով: «Զանգեզուր մայնինգ»-ի բաժնեմասերի վրա դրված կալանքի հիմքերի մասին ևս մանրամասներ չկան:

«Զանգեզուր մայնինգ»-ն անցյալ տարի դատաան գործընթաց էր սկսել ընդդեմ կոմբինատի մյուս բաժնետերերի: Ընկերությունը [պահանջում](#) էր կոմբինատի բաժնետոմսերի առքուվաճառքի մի շարք գործարքներ անվավեր ճանաչել, իսկ որոշ գործարքներում էլ որպես գնորդ նախապատվությունն իրենց տալ: Դատարանը քննել ու մերժել էր ընկերության հայցը, իսկ պղնձամոլիբդենային տնօրենների խորհրդի նախկին անդամ, ներկայում «Հայաստան» դաշինքի պատգամավոր Վահե Հակոբյանը Ջուրաբովի գործողությունները «ալոզիկ» էր որակել: «Զանգեզուր մայնինգ»-ի շահերի ներկայացուցիչ Միխայիլ Մկրտումյանը «Լուրեր»-ին ասաց՝ «լիազորված չէ որևէ բան մեկնաբանել» բաժնեմասերի կալանքի հարցով:

Օգոստոսի 2-ին կալանք է դրվել նաև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին պատկանող այլ ընկերություններում ունեցած բաժնեմասերի վրա: Խոսքը մասնավորապես վերաբերում է «Լեռ-էքս» ՍՊԸ-ին, որը շահագործում էր Սյունիքի մարզի Հանքասարի պղնձամոլիբդենային հանքավայրը, որի հաստատված պաշարները կազմում են ավելի քան 2 միլիոն 762 հազար տոննա հանքաքար: Հանքավայրը, որի ընդերքօգտագործման իրավունքը մինչև 2030 թվականն էր, 2014-ի վերջից սկսած չի աշխատում, արդյունահանում չի իրականացվում: Վերջերս հայտնի դարձավ, որ «Լեռ-էքս»-ը [սկսել](#) է հանքավայրի փակման աշխատանքներ՝ ըստ պաշտոնական պարզաբանման հանքի աշխատանքը շահավետ չի գնահատվել:

Հուլիսի 14-ին Ազգային անվտանգության ծառայությունը խուզարկություն էր անցկացրել պղնձամոլիբդենայինում, մի քանի աշխատակիցներ բերման էին ենթարկվել: Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտից «Լուրեր»-ին հայտնել են՝ ԱԱԾ-ում քննվում է քրեական գործ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի մի խումբ աշխատակիցների կողմից Քաջարանի համայնքապետի և այլոց օժանդակությամբ, խարդախությամբ առանձապես խոշոր չափի գույք հափշտակելու, Քաջարանի համայնքապետի կողմից առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, ինչպես նաև 2017-ի ապրիլի 2-ին կայացած ՀՀ Ազգային ժողովի 6-րդ գումարման ընտրություններում ՀՀԿ-ի օգտին հնարավոր առավելագույն ձայներ ապահովելու նպատակով ընտրողներին կաշառք տալու դեպքերի վերաբերյալ»:

Այս գործով մեղադրյալներ են Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանը, որը ներկայում կալանավորված է, նախկին փոխքաղաքապետ Արա Դավթյանն ու նրա կինը՝

Աննա Հակոբյանը, Քաջարանի բնակիչներ Վազգեն Ազարյանը, Շանթ Ալեքսանյանը, Նվեր Մկրտչյանը, Վահե Սողոմոնյանը, Կոմբինատի իրավաբանական պայմանագրային ծառայության պետ Արա Ղոնյանը, անվտանգության պետ Արամ Գասպարյանը:

Այս գործով մեղադրյալներ են նաև Հայկ Մերուժանի Եղիազարյանն ու Արամայիս Հարությունի Պողոսյանը:

Աղբյուրը՝

<https://www.1lurer.am/hy/2021/08/13/%D4%B6%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A5%D5%A6%D5%B8%D6%82%D6%80%D5%AB-%D5%BA%D5%B2%D5%B6%D5%B1%D5%A1%D5%B4%D5%B8%D5%AC%D5%AB%D5%A2%D5%A4%D5%A5%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%D5%AB-%D5%A2%D5%A1%D5%AA%D5%B6%D5%A5%D5%BF%D5%B8%D5%B4%D5%BD%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB-%D5%BE%D6%80%D5%A1-%D5%AF%D5%A1%D5%AC%D5%A1%D5%B6%D6%84-%D5%A7-%D5%A4%D6%80%D5%BE%D5%A5%D5%AC/536120>

13.08.2021

Ֆուտբոլի վերադարձը իրադարձություն է

Կապանցիները օգոստոսի 12-ին քաղաքային մարզադաշտում մասնակիցը եղան ֆուտբոլային հանդիպման: Հանրապետության ֆուտբոլի առաջնության առաջին խմբի շրջանակում Կապանի «Գանձասարը» (գլխավոր մարզիչ՝ Տիգրան Եսայան) ընդունեց Գյումրիի «Շիրակին»:

Հանդիպումը սկսելուց առաջ հանդիսականները մեկ րոպե լռությամբ հարգեցին «Գանձասար» ակումբի հիմնադիր նախագահ Մաքսիմ Հակոբյանի եւ 44-օրյա պատերազմում զոհվածների հիշատակը, որոնց թվում է «Գանձասարի» սան Տիրան Պետրոսյանը: Այնուհետեւ թիմերի ավագները հանրապետության օրհներգի հնչյունների ներքո բարձրացրեցին հանրապետության եռագույնը, ՀՀ ֆուտբոլի 30-րդ առաջնության դրոշները: Գնդակը խաղի մեջ մտցնելու իրավունքը վերապահվեց «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանին:

Մինչեւ հանդիպման 15-րդ րոպեն խաղադաշտում հետախուզական ֆուտբոլ էր ընթանում: 18-րդ րոպեին «Գանձասարը» տուգանային հարվածի իրավունք ստացավ, որը հստակ իրացրեց Ալեն Կարապետյանը: Հյուրերից երեք րոպե պահանջվեց հավասարեցնելու հաշիվը: Երկրորդ խաղակեսի սկզբում թիմերը դարձյալ փոխանակվեցին գուլերով, որից հետո «Շիրակը» եւս մի գուլ խփեց՝ հաղթանակի նժարը թեքելով իր կողմը: Դաշտում հիմնականում հավասար պայքար էր ընթանում, այնուամենայնիվ, «Գանձասարի» փորձի պակասը զգալ տվեց:

Պարտությունը բնավ էլ չստվերեց օրվա խորհուրդը, քանզի տեւական ընդմիջումից հետո մեծ ֆուտբոլը վերադարձել է Կապան:

Իրադարձությանը մասնակցում էր Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանը, ով հանդիպումից առաջ «Սյունյաց երկրի» հետ ճեպագրույցում ասաց, որ հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիայի համար գերխնդիր էր մեծ ֆուտբոլը Կապան վերադարձնելը: Ինչ վերաբերում է մարզկենտրոնի ֆուտբոլային ենթակառուցվածքներին՝ Ա.

Մելիքբեկյանը նշեց, որ ֆուտբոլի առաջնության շեմին բավականին գործ է արվել, իսկ եղած թերություններն իրենց օգնությամբ կշտկվեն, եւ Կապանում հանդես եկող թիմերն առավել մրցակցային հնարավորություն կստանան:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/futboli-veradardzy-iradardzutyun-e>

12.08.2021

Հարություն Ոսկանյան. «Տաթև-Կապան ճանապարհի Աղվանի-Շրվենանց հատվածում կառուցում ենք չորրորդ կարգի ճանապարհ»

Տաթևի վանական համալիրը Կապանին կապող ավտոճանապարհի Շրվենանցի խաչմերուկ-Աղվանի՝ 17,5 կմ-անոց հատվածը (կմ 37+500-կմ 55+00) հիմնանորոգում է «Ոսմար» ՍՊ ընկերությունը՝ ամենախոշոր ճանապարհաշինական ձեռնարկությունը Գորիսի տարածաշրջանում:

Ընկերության երիտասարդ տնօրեն Հարություն Ոսկանյանը ձեռնարկության հիմնադրման ժամկետ է նշում 1925 թվականը:

Հայաստանի անկախացումից հետո արդյունաբերական եւ շինարարական բազմաթիվ ձեռնարկություններ իրենց մեքենասարքավորումների եւ գույքի հետ փոշիացան, բայց «Ոսմարի» եւ մեքենասարքավորումները, եւ մարդուժը պահպանվեցին, ու հիմա ճանապարհաշինարարներ ունեն, որոնց աշխատանքային կենսագրությունը չորս տասնամյակից ավելի ժամանակաշրջանով է չափվում:

2002 թվականին «Ոսմարը» ՍՊ ընկերության կարգավիճակ է ձեռք բերել, որը 2017 թվականից ղեկավարում է Հարություն Ոսկանյանը. ծնվել է 1991 թ., 2007-2008 ուստարում ավարտել է Գորիսի թիվ 4 միջնակարգ դպրոցը, ընդունվել Երեւանի ճարտարապետաշինարարական համալսարանի «Ձեռնարկությունների տնտեսագիտություն եւ կառավարում» ֆակուլտետը, որի բակալավրիատն ավարտելուց հետո շինարար-տնտեսագետի մասնագիտությամբ վերադարձել է հայրենի Գորիս:

Միանգամից ասենք, որ «Ոսմար» ՍՊ ընկերությունը 44-օրյա պատերազմից առավել տուժած ընկերությունն է մարզում, թեպետ շատ հեռու էր մարտական գործողությունների թատերաբեմից: 2020 թ. դեկտեմբերի 18-ի՝ այսպես կոչված սահմանազատումից հետո ընկերության ասֆալտգործարանը, որ գտնվում էր Որոտան գյուղի մերձակայքում, հայտնվեց սահմանից անդին: Ճիշտ է, ասֆալտգործարանի սարքավորումները հնարավոր եղավ ապամոնտաժել եւ տեղափոխել, բայց շենք-շինությունները, խճի, ավազի հսկայական պաշարը մնացին հակառակորդին, եւ հիմա տնօրինում են աղբբեռանցիները:

Այդ առումով Ոսկանյանը նշում է, որ կորուստներն անչափելի են, բայց թեւաթափ չեն եղել: Մեծ գումար են ծախսել եւ հիմա ամայի մի տեղ (Շինուհայրի խաչմերուկի մերձակայքում) տեղադրել են ասֆալտգործարանի սարքավորումները եւ հրնթացս լուծում են գազիֆիկացման, ջրամատակարարման, էլեկտրասնուցման խնդիրները: Ի դեպ, հակառակորդին մնաց նաեւ ավազակոպճագլաքարային հանքը, եւ հիմա հումքի խնդիրը լուծում են Միսիանից ներկրելով:

Անդրադառնալով Աղվանի-Շրվենանցի խաչմերուկ կառուցվող ճանապարհին, ընկերության ղեկավարը նշում է. «Կարելի է ասել նոր ճանապարհ ենք կառուցում, որովհետև

լայնացումներ ենք տալիս, լիցքեր անում, մեծ ծավալի հողային աշխատանքներ կատարում: Հիմա փորձում ենք նվազագույնը դարձնել չորրորդ կարգի ճանապարհ: Ճանապարհի անհրաժեշտ լայնությունն ապահովելու համար 6 կմ երկարությամբ եւ 10 մետր լայնությամբ անտառահատում է իրականացվել: Որպեսզի բնությանը շատ վնաս չհասցնենք, համագործակցել ենք շրջակա միջավայրի նախարարության հետ: Ավելի ստույգ՝ մեր դիմումի համաձայն՝ անտառի պահապաններն են կատարել հատումը»:

Երբ երթել եկեցինք Աղվանի-Շրվենանց ճանապարհով, համոզվեցինք, որ «Ոսմարին» Տաթև-Կապան ավտոճանապարհի ամենադժվարին հատվածն է բաժին ընկել: Ըստ ամենայնի՝ հողածածկ մի ճանապարհ էր. երբեմն-երբեմն հանդիպող ասֆալտի կտորները հուշում էին, որ խորհրդային տարիներին ասֆալտածածկ է եղել:

Տեղամասի պետ Ասատուր Այվազյանն ասում է, որ աշխատանքները սկսել են 2021-ի հունիսին: Եթե ֆորսմաժորային իրավիճակներ չլինեն (հիմնականում անբարենպաստ եղանակի հետ կապված)՝ ծրագիրը կավարտեն տարեվերջին:

Նույնիսկ շրջանցիկ ճանապարհ են բացել ընկերությանը հատկացված ճանապարհահատվածում հանդիպող միակ կամրջի նորոգման համար: Հողային աշխատանքները կատարել են 90 տոկոսով: Եվ հիմա ստեպ-ստեպ երթնեկող ավտոմեքենաները փոշու հսկա ամպ են բարձրացնում:

Ներկայումս ճանապարհաշինարարների ձեռակերպմամբ՝ ծածկի մշակման աշխատանքներ են կատարվում: 5 կմ-ի վրա տեղադրել են ավազակոպճային շերտ, պատրաստվում են տեղադրել 9—5 ավազակոպճային խտնուրդով 20 սմ շերտը, որի վրա լինելու է 3 շերտ ասֆալտ:

Հիմնանորոգվող ճանապարհահատվածի դժվարությունը նաեւ այն է, որ անցնում է երկու գյուղով՝ Տանձավեր, Վերին Խոտանան, ու տակավին լուծված չեն որոշ նախագծային խնդիրներ՝ կապված գյուղամիջյան ճանապարհի լայնության հետ: Պիտի ապահովվի ճանապարհի՝ գյուղերով անցնող հատվածի նախատեսվող ասֆալտապատ 6,0 մ լայնությունը: Իսկ դա հնարավոր կլինի գյուղացիների տների, տնամերձերի եւ օժանդակ կառույցների հաշվին:

Ինչպես տեղեկացրեց տեղամասի պետը, սպասում են նախագծային փոփոխությունների, մանավանդ ճանապարհի մոտ մեկ կիլոմետրը Խոտանանի գյուղամիջով է անցնում, նույնքան էլ՝ Տանձավերի միջով: Բացի այդ, Խոտանանում (եկեղեցու մերձակայքում) շրջադարձի շառավիղը նորմատիվին չի համապատասխանում, ինչի համար լայնացումներ պիտի կատարեն, լիցք անեն: Ի դեպ, խոտանանցիները մտահոգված են Վերին Խոտանանի 17-րդ դարի եկեղեցու ճակատագրով, որ ճանապարհին կից է գտնվում: Ընկերության տնօրենը հավաստիացրեց, որ բոլոր մտավախություններն անհիմն են, դեռ ավելին՝ եկեղեցու հարավային կողմից հենապատ պիտի կառուցեն:

Հարություն Ոսկանյանը տեղեկացրեց, որ ընկերությունում այս պահին մոտ 70 մարդ է աշխատում, նաև որոշ աշխատանքներ կատարելու համար ընդգրկված են ենթակապալառու կազմակերպություններ:

Ի դեպ՝ ճանապարհաշինարարները սնվում և գիշերում են Տանձավերում:

Ինչու է, բավականին դժվար ծրագիր է բաժին ընկել «Ոսմար» ընկերությանը: Խոչընդոտների մի մասն էլ պայմանավորված է նախագծային բնույթի խնդիրներով: Բայց,

այդքանով հանդերձ, Հարություն Ոսկանյանը հավաստում է, որ ճանապարհը կկառուցվի ժամանակին եւ բարձր որակով:

Ուրեմն եւ «Ոսմարին» հաջողություն ենք մաղթում:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/harutyun-oskanyan-tate%D6%82-kapan-chanaparhi-akhvani-shrvenantsi-khachmeruk-hatvatum-karutsum-enq-chorrord-kargi-chanaparh>

10.08.2021

Աղբբեջանցիները դիտավորյալ հրդեհել են Ագարակի ցորենի դաշտերը. այրվել է 16 հա տարածք

Երկրորդ օրն է՝ հրդեհ է բռնկվել Սյունիքի մարզի Ագարակ գյուղի և Աղբբեջանի սահմանային հատվածում: Ագարակի վարչական ղեկավար Հայկ Սահակյանը [«Փաստինֆո»](#)-ին տեղեկացրել է, որ աղբբեջանցիները երեկ և այսօր միտումնավոր այրել են 16 հա հողատարածք ու ավելին: Կրակը, որ բռնկվել է ամբողջ սահմանային հատվածում, մարել չի հաջողվում:

«Մեր տարածքներն են: Հակառակորդը իր սահմանից վառել է, այս պահին մեր դիրքերի ուղղությամբ դաշտերն են վառվում: Իրենք ամեն օր էլ հրդեհում են, մեր գյուղից երևում է, մենք տեսնում ենք»:

Ժամը 13:00-ից, ըստ վարչական ղեկավարի, 10 հա տարածք է այրվել: Կրակը մարել չի հաջողվել, այն տարածվում է մյուս խոտածածկ հատվածներում: Դրանք գյուղի վարձակալած հողերն են, որոնք անմիջապես Աղբբեջանի հետ սահմանի մոտ են: Գյուղացիները ցանած ցորենը հասցրել էին հավաքել:

«Այս հողերում ցորեն էինք ցանել, հիմա հնձած է, բայց էլի մեր դաշտն է, պետք է նորից վարենք, որ ցորեն ցանենք: Ցորենը հավաքել ենք, բայց դաշտերը վառվում են՝ մնացած խոտը, բանը, անասնակերը սաղ վառվում են»:

Կրակը հնարավոր է մեծ տարածում ունենա, բայց հրշեջները գյուղում են: Երեք հրշեջ մեքենա է այս պահին աշխատում՝ հրդեհը մարելու համար, համայնքապետարանից էլ 12 տոննա տարողությամբ ջրցան մեքենաներ են բերվել: Սահակյանի խոսքով, գյուղի մեծ մասը՝ մոտ 40 ընտանիք տուժել է աղբբեջանական կողմի սադրանքի պատճառով:

«Հիմա 10 հա վառվում է, բայց կրակը շարունակվում է: Երեկ էլ 6 հա է վառվել: Գյուղում՝ գյուղամեջից սահմանի դիրքերը ու տեղաշարժը երևում է: Աղբբեջանական կողմը մեկ ամսվա մեջ օրը մեջ էլ վառում են, մենք տեսնում ենք, որ լուցկիով վառում են: Աղբբեջանական կողմը հենց վառվող հողերի սահմանի վրա է, գյուղամեջից էլ իրենք 1 կմ են հեռու»:

Ամբողջ սահմանային հատվածը այրվում է, իսկ սադրանքներից խուսափելու համար Տեղ համայնքի օրինակով Ագարակ գյուղում չեն կարող իրենք էլ սահմանային հատվածը փորել, քանի որ ռելիեֆը թույլ չի տալիս: Գյուղացիները չգիտեն՝ կրակը մարելուց հետո ինչպես են հողերը մշակելու, այս պահին չեն էլ մտածում այդ մասին՝ դաշտերը դեռ վառվում են:

Աղբբյուրը՝ <https://www.pastinfo.am/hy/news/2021/08/09/y1kzzglv8/1252014>

07.08.2021

**Հարժիսի դպրոցական շենքի կառուցումը անհասկանալիորեն դադարեցված է.
Չինկազմակերպության ղեկավարն անհասանելի է**

Հարժիս գյուղի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի ներկայիս շենքը, որը շահագործման է հանձնվել 1973 թվականին, տարիներ անց հայտնվել է վթարային վիճակում:

Գյուղի բնակիչների՝ այդ առիթով մտահոգությունները 2019 թ. արժանացել են ՀՀ կառավարության ուշադրությանը:

Եվ որոշվել է գործող դպրոցի դահլիճային մասում ու դրան կից հատվածում (ֆուտբոլի դաշտի տեղում) կառուցել դպրոցական նոր շենք՝ հրաշալի նախագծով (100 աշակերտի համար), որն էլ մտել է 2020-21 թթ. պետական ծրագրերի մեջ:

2020 թ. նոյեմբերին մեկնարկել է դպրոցական նոր շենքի կառուցումը. շինարարական կազմակերպությունը քանդել է նախեւառաջ գործող դպրոցի դահլիճային, նաեւ մարզադահլիճային մասը, օժանդակ այլ կառույցները, որոնց տեղում էլ կբարձրանա դպրոցի նոր շենքը:

Շինարարական աշխատանքների մեկնարկը խոստումնալից է եղել:

Ըստ դպրոցի տնօրեն Նորայր Եսայանի՝ բավականին լավ աշխատանք է կատարվել հիմքերի կառուցման ուղղությամբ, եւ արդեն իսկ ավարտվել է հիմքերի կառուցումը, իսկ մինչ այդ իրականացվել է հսկայածավալ հողային աշխատանք:

Մակայն այս տարվա հուլիսի առաջին օրերից շինաշխատանքները դադարեցված են, եւ սառեցված այդ վիճակը շարունակվում է մինչեւ հիմա:

Գյուղաբնակներին այդ ամենը, անշուշտ, անհանգստացնում է, չէ՞ որ խոսքը դպրոցի, գյուղի երեխաների կրթությանն առնչվող գլխավոր խնդրի եւ, ի վերջո, գյուղի ապագայի մասին է:

Ընդ որում՝ բնակավայրում ամենատարբեր խոսակցություններն են շրջանառվում: Այսպես՝ շինարար բանվորները (ե՛ւ տեղացի, ե՛ւ դրսեկ) հրաժարվել են աշխատել այդ կառույցում՝ աշխատավարձերի հետ կապված հարցերի պատճառով: Ավելի կոնկրետ՝ (դպրոցի տնօրենի վկայությամբ)՝ Չինկազմակերպությունը բանվորներին մինչեւ հիմա չի վճարել մոտ 5 մլն դրամի հասնող աշխատավարձի պարտքը:

Իսկ ո՞վ է կառույցի պատվիրատուն. պարզվում է՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն:

Շինարարական կազմակերպությունն էլ «Գազպրոմշին» անվանումով ՍՊ ընկերությունն է, որի ղեկավարն է Մաքսիմ Միսակյանը:

Ոչ սյունիքյան այդ ընկերության վերաբերյալ որեւէ տեղեկատվություն չկարողացանք գտնել համացանցում կամ այլ աղբյուրներում: Ընկերության անվանումին բացառապես հանդիպեցինք դատական մի քանի գործերի առնչվող լրատվական հրապարակումներում:

Շատ ջանքեր գործադրելուց անգամ չհաջողվեց հեռախոսով կապվել Չինկազմակերպության ղեկավարի հետ եւ պարզել Հարժիսի դպրոցական շենքի կառուցման գործում ստեղծված անորոշ եւ խառնաշփոթ վիճակի պատճառը:

Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ռազմիկ Ավետիսյանն էլ, թեեւ տեղյակ էր դպրոցական շենքի շինարարության՝ դադարեցված լինելու մասին, բայց չգիտեր պատճառները, քանի որ (ըստ վարչության պետի) շինարարության պատվիրատուն ՀՀ քաղաքաշինության կոմիտեն է:

Ուստի եւ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ուշադրությունն ենք հրավիրում Հարժիսում ստեղծված իրավիճակի վրա, ակնկալում համապատասխան պարզաբանում ու աշխատանքների վերսկսում եւ, իհարկէ, պատասխան գլխավոր հարցին՝ արդո՞ք դպրոցական շէնքը կհաջողվի շահագործման հանձնել 2021-ի դեկտեմբերին, ինչպես եւ նախատեսված է:

Կարելոր էնք համարում նաեւ «Գազպրոմշին» ՍՊ ընկերության ղեկավարի պարզաբանումը, այլապես պարզագույն մի հարց կծագի՝ ինչպե՞ս է այդ ընկերությունը հաղթող ճանաչվել դպրոցական շէնքի կառուցման համար հայտարարված մրցույթում:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/harzhisi-dprotsakan-shenqi-karutsumy-anhaskanalioren-dadaretsvats-e-shinkazmakerputyan-khekavarn-anhasaneli-e>

07.08.2021

Ադրբեջանական ԶՈՒ ստորաբաժանումները Սև լճի հատվածում կրակ է բացել հայկական դիրքերի ուղղությամբ

Օգոստոսի 7-ին, ժամը 11:40-ից 12:00, ադրբեջանական ԶՈՒ ստորաբաժանումները հերթական անգամ դիմել են սադրանքի՝ տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներով կրակ բացելով հայ-ադրբեջանական սահմանի Սյունիքի մարզի, մասնավորապես՝ Սև լճի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ:

Հայ դիրքապահների պատասխան գործողություններով հակառակորդի կրակը լռեցվել է: Հայկական կողմից տուժածներ չկան:

Աղբյուրը՝ <https://infocom.am/hy/Article/62190>

05.08.2021

Սզնակ բնակավայրի տարիներ շարունակ չլուծվող խնդիրը՝ խմելու ջուր

2021 թվականն աչքի ընկավ աննախադեպ տաք եղանակով, նույնիսկ այն գյուղերն ու բնակավայրերը, որոնք խմելու ջրի խնդիր չէին ունեցել, բախվեցին սակավաջուր իրականությանը:

Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի Սզնակ (Սզնուտ, Սզնեկ) բնակավայրում, որը նոյեմբերի 9-ի հայտարարությունից, մասնավորապես դեկտեմբերի 18-ից հետո դարձել է սահմանային գյուղ, տարիներ շարունակ խմելու ջուրը, ավելի ճիշտ՝ դրա բացակայությունը, եղել է այսօր էլ մնում է մեծագույն խնդիր:

Մի քանի տարի առաջ գյուղում խմելու ջրի ներքին ցանց է կառուցվել, որը մինչ օրս չի գործում: Գյուղում հունվարի 1-ի դրությամբ մշտապես բնակվում է 35 ընտանիք՝ 105 մարդ: Տներից միայն 10-ում է ծորակից մշտապես ջուր գալիս, որը բնակիչների ասելով՝ կազմում է ժամում 20 լիտր, այսինքն՝ քիչ բախտավորներն ամռան ամիսներին օրական առավելագույնը 280 լիտր ջուր ունենալու հնարավորություն ունեն, որն էլ անհնարին է դարձնում ունեցած ջրից հարեւաններին բաժին հանելը:

Եղած ջրի մաքրությունը բնակիչները բառերով չեն նկարագրում, փոխարենը մեզ են պարզում որդերի ու հողի նստվածքով դույլը:

Գյուղի կենտրոնում աղբյուր կա, որի ջուրը խմելու համար պիտանի չէ, բայց ջրի բացակայության պատճառով աղբյուրի մոտ հաճախ հերթեր են գոյանում:

Խնդրի մասին գրուցում ենք «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության հանրային կապերի բաժնի աշխատակից Մուրադ Սարգսյանի հետ, ով մանրամասն բացատրում է խնդրի էությունը. ««Վեոլիա Ջուրը» պատասխանատու չէ նշված բնակավայրում ջրի մատակարարման համար, բայց խնդրից տեղյակ ենք, տարիներ առաջ ներքին ցանց է կառուցվել, որը չի կարող ապահովել ջրամատակարարումը, քանի որ պաշարները բավարար չեն»:

Մյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային եւ ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ Էդուարդ Միրզոյանից հետաքրքրվում ենք՝ արդյո՞ք որեւէ բան արվում է Սզնակ գյուղին խմելու ջուր հասցնելու համար, պատասխանում է. «Նախ՝ ցանկանում եմ տեղեկացնել, որ Մյունիք բնակավայրը խմելու ջուր ստանում է երկու տեղից՝ Չանախչիից եւ Գեղիից: Այժմ առկա է նախագիծ, որով Մյունիք գյուղի բնակիչների մի մասը ջուր կստանա Գեղիից, որն էլ հնարավորություն կտա Չանախչիի ջրագծից ջուր տրամադրել Սզնակ բնակավայրին: Նախագիծը դեռեւս օրենքով նախատեսված ընթացակարգերով պիտի անցնի, որից հետո աշխատանքները կսկսվեն: Բարեհաջող ընթացքի դեպքում, 2021-ի տարեվերջին կամ 2022-ի տարեսկզբին Մյունիք գյուղում ջրամատակարարման խնդիրն ամբողջությամբ կլուծվի: Դրանից հետո հնարավոր է, որ Սզնակում էլ որոշ չափով հնարավոր լինի լուծել այդ խնդիրը»:

Ու մինչ տարբեր պաշտոնյաներ տարբեր պատասխաններ են տալիս, հուսադրում, խոստանում կամ խուսափում, սզնակցիները հաշվում են ջրի կաթիլներն ու փորձում եւս մի տարի առանց ջուր ու ջրի հույսով սպասել ամառվա ավարտին. . .

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/sznak-bnakavayri-tariner-sharunak-chlutsvokh-khndiry-khmelu-jur>

04.08.2021

Ճակատենի ճանապարհից աղբբեջանցիները 4-5 մ հեռավորության վրա են գտնվում, ձեռքով են անում, սուլում, հասցրել են ստրատեգիական ճանապարհ կառուցել, անվտանգության ոչ մի երաշխիք չկա. համայնքի ղեկավար

Մյունիքի մարզի Ճակատեն գյուղի արոտավայրերի մեծ մասը, ջրի հետ միասին մնացել է Աղբբեջանի վերահսկողության տակ: Գյուղացիները անասուններին հիմա արածեցնում են այլ տարածքում: Արոտավայրերը քիչ են, պատահում է, որ անասունները արածելու կամ ջուր խմելու համար անցնում են աղբբեջանցիների վերահսկողության տակ գտնվող տարածք: Հուլիսի 26-ին արոտի ժամանակ գյուղացիները նկատել են, որ իրենց 4 կովերը չկան, մտածել են, որ գուցե իջել են «Յուրդեր» կոչվող տարածք, ջուր խմելու և անցել աղբբեջանցիների վերահսկողության տակ գտնվող տարածք: Այս մասին Tert.am-ի հետ գրույցում ասաց Ճակատեն համայնքի ղեկավար Արա Հարությունյանը:

Համայնքապետի խոսքով՝ գյուղացիներից մեկը, ում պատկանել են կովերը, հեռադիտակով տեսել է, որ անասունները գտնվում են աղբբեջանցիների վրանների մոտ՝ կապված վիճակում, ինչից հետո տեղյակ են պահել սահմանապահներին, վերջիններս էլ ռուս խաղաղապահներին:

«Երբ ռուսները դիմել են աղբբեջանցիներին, գյուղացիները տեսել են, որ կովերը այլևս այնտեղ չեն: Աղբբեջանցիները ռուսներին ասել են, որ իրենց մոտ կովեր չկան, թող ապացուցեն, որ այդպես է, տեսանյութ կամ լուսանկար հրապարակեն: Ես չեմ հասկանում՝

ինչ տեսանյութի կամ նկարահանման մասին է խոսքը: Եթե այդ պահին տեսնեին, բնականաբար չէին թողնի, որ անցնեն, ոչ թե կնկարահանեին: Դեպքի առիթով դիմել ենք համապատասխան մարմիններին, հիմա ընթացակարգի մեջ է: Գյուղացին կովը վարկով է գնել, հիմա չի կարողանում վճարել տոկոսները, խնդրել եմ սառեցնեն տոկոսները մինչև հարցը լուծվի: Հակառակ դեպքում, հավանաբար, կվաճառի նաև մյուս անասուններին»:

Համայնքապետը նշում է, որ նման դեպք գրանցվել է նաև փետրվարին: «Ես չեմ կարող երաշխավորել, որ վաղը նման դեպք չի կրկնվի, շատ մոտ ենք իրենց, անվտանգության խնդիր կա: Եթե էսպես շարունակվի, գյուղում մարդ չի մնալու: Գյուղի բնակիչները չեն պահանջում ո՛չ գումար, ո՛չ ապրելու միջոց, պահանջում են միայն անվտանգություն, դա է թիվ մեկ խնդիրը: Հարևանի տուն գիշերը վախենում ես գնալ: Ես ամեն օր գնում, գալիս եմ ճակատեն, ու ամեն օր աղբբեջանցիները 4-5 մ հեռավորության վրա ինձ ձեռքով են անում, դա նորմալ չէ»:

Աղբբեջանական կողմը, երբեմն, դիմում է սաղրանքների: Մասնավորապես կիրակի օրը ճանապարհին, որտեղ 4-5 մ հեռավորության վրա աղբբեջանցիներն են, մեքենայով անցնելիս՝ աղբբեջանցիները շատ վատ են իրենց պահել, սկսել են շվացնել, գոռգոռալ, մեքենայի մեջ կանայք և երեխաներ են եղել, շատ են վախեցել: Դրա մասին զեկուցել եմ սահմանապահ գործերին, իրենք էլ ռուս խաղաղապահներին»:

Հարությունյանի խոսքով՝ աղբբեջանական ամենամոտ դիրքը գյուղից 650-700 մ է հեռու: «Դեկտեմբերից սկսեցին արագ կերպով ինժեներական աշխատանքներ կատարել իրենց դիրքերում, հարթեցման տեխնիկա է աշխատել, ինչից հասկացանք, որ ճանապարհ են կառուցում, մեկ ամսվա մեջ ամեն ինչ կազմակերպել են, իսկ մեր ճանապարհը վերանորոգելու համար արդեն 3 ամիս է՝ դիմել են բոլոր պատական մարմիններին, որ վերանորոգեն, դեռ պատասխան կա: Աստված հեռու, որ պատերազմ, սկսվի այդ ճանապարհը մեզ շատ է պետք գալու: Սպասում ենք, բայց հնարավոր է գա մի օր, որ էլ չկարողանանք սպասել»:

Աղբյուրը՝ <https://www.tert.am/am/news/2021/08/04/Village/3676160>

04.08.2021

Հայաստանում սուբվենցիոն ծրագրերով Սյունիքը առաջատարն է

Սյունիքի մարզի համայնքներում 2020-ի սուբվենցիոն ծրագրերը դեռ շարունակվում են. պատերազմն ու համավարակը դանդաղեցրել էին դրանց ընթացքը: Զուգընթաց՝ իրականացվում են նաև 2021թ-ի ծրագրերը: Սյունիքի մարզպետարանի զարգացման ծրագրերի եւ վերլուծությունների բաժնի պետ Հայկ Կարախանյան:

«2021թ, համացր ունենք հաստատված 21 ծրագիր, ընդհանուր արժողությամբ նախահաշվարկային գինը 7 մլրդ 291 մլն է: Կարող ենք ասել, որ Սյունիքի մարզը, արդեն երկու տարի, Հայաստանում ռեկորդակիր է: Այսինքն, ավելի շատ ծրագիր Սյունիքի մարզում է արվում, քան որեւէ այլ մարզում»:

Համայնքներում սուբվենցիոն ծրագրերով է իրականացվում նաև փողոցների ասֆալտապատումը: Բանուկ ու բարեկարգ փողոցը կարևոր է, բայց բնակիչներն առաջարկել են այս փուլում ասֆալտապատման գումարներով սահմաններն ամրացնեն, զենք գնեն: Հայկ

Կարախանյանը պարզաբանում է՝ կան հաստատված ոլորտներ, որտեղ կարելի է օգտագործել պետությունից տրվող նպատակային գումարները.

«Սուբվենցիան կոնկրետ նպատակային հատկացում է, պետությունն ինքը կոնկրետ նշում է, թե որտեղ նպատակային կապիտալ ծախսեր անել՝ ճանապարհաշինությամբ մեջ, ջրագծեր ու բազմաբնակարան շենքեր կառուցելի՞ս թե մեկ այլ տեղ: Ջենքի տողով հատկացումներ չկան»:

Սյունիքում իրականացվող սուբվենցիոն բոլոր ծրագրերն էլ կարևոր են ու ծավալուն: Հայկ Կարախանյանը 21-ից առանձնացնում է գյուղական բնակավայրերում ջրագծերի անցկացումը: Աննախադեպ է Քաջարանի բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության ծրագիրը, քանի որ Քաջարանում ձմեռը երեք ամսից երկար է ձգվում: Ծրագրի ընդհանուր արժեքը 2 մլրդ 700 մլն դրամ է, 25 տոկոսը տրամադրել է ՄԱԿ ի զարգացման ծրագիրը, մի մասն էլ՝ Ջանգեզուրի պղնձամուլեբդիինային կոմբինատը:

Մեղրիի տարածաշրջանում այս տարի նախատեսված է 3 ծրագիր. Ագարակ քաղաքի փողոցների ասֆալտապատում եւ մայթերի բարեկարգում, Վանք-Կալեր կամուրջի վերակառուցում, Մեղրիում՝ խաղահրապարակի հիմնում, քաղաքի բազմահարկ շենքերի վերելակների արդիականացում: Մեղրիի համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արարատ Թումանյան: «Մոտ երկու ամիս առաջ մասնագետները եկել էին վերելակների արդիականացման համար, բայց նպատակահարման չգտան, այդ շենքերի վերելակների խորշերը իրենց ստանդարտներին չեն համապատասխանում: Կամ կփոխվի ծրագիրը, կամ այլ կազմակերպություն կգտնենք, որ կկարողանա արդիականացնել վերելակները»:

Տեղ սահմանամերձ համայնքի Խոզնավար եւ Խնածախ բնակավայրերում նախատեսված է ոռոգման ներքին ցանցերի կառուցում եւ վերանորոգում: Համայնքի ղեկավար Ներսես Շադունցը «Ռադիոլուր»-ին տեղեկացրեց, որ շուտով կհայտարարվի մրցույթ, ու կսկսեն կառուցումը: Արդյո՞ք Տեղ համայնքի աշխարհագրական դիրքը՝ Սեւ լճի մերձակայքում, այսօրվա իրավիճակում կխանգարի ծրագրի իրականացմանը: Ներսես Շադունցն ասում է՝ եթե այլ սպառնալիքներ չլինեն, ծրագրերը կարելի է հասցնել ավարտին: Տեղի ղեկավարը կարեւորում է սուբվենցիոն ծրագրերի իրականացումը համայնքների համար:

«Նվիրած ձիու աստամները, ասում են՝ չեն հաշվում: Հիմա կառավարությունը 60 տոկոսն է անում, 40 տոկոսը դու ես անում՝ լավ է: Համայնքային բյուջեով չենք կարող դա անել: Սուղ է տեղական բյուջեն»:

Մարզպետարանի զարգացման ծրագրերի եւ վերլուծությունների բաժնի պետ Հայկ Կարախանյանը համակարծիք է: Ասում է՝ սա լավ գործիքակազմ է համայնքներում կուտակված խնդիրները լուծելու համար. «2019թ-ին մարզի սուբվենցիոն ծրագրերի ծավալը կազմել է 2,5 մլրդ դրամ: Պետությունը հատկացրել է 1,4 մլրդ, այսինքն, 60 տոկոս: 2020թ-ին ուրիշ պատկեր ենք ունեցել: 8, 3 մլրդ դրամի հաստատված սուբվենցիոն ծրագիր ենք ունեցել, պետության մասնաբաժինը եղել է 4,2 մլրդ դրամ, այսինքն, 50 տոկոսը: Իսկ 2021թ-ին 7,2 մլրդից 3,5 մլրդ եղել է պետության մասնաբաժինը, այսինքն, 30 տոկոսը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքները կարողանում են խնայողություններ անել, գումարներ գտնել բերել՝ հիմնախնդիրները լուծելու համար»:

Հայկ Կարախանյանը վստահ է՝ այս տեմպերով շարունակելու դեպքում, մի քանի տարի հետո, Սյունիքի համայնքներում կենսական նշանակության խնդիրները հիմնականում լուծված կլինեն:

Աղբյուրը՝

<https://hy.armradio.am/2021/08/04/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%BD%D5%B8%D6%82%D5%A2%D5%BE%D5%A5%D5%B6%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5%D6%80%D5%B8%D5%BE-%D5%BD/>

03.08.2021

Աղբբեջանական զինծառայողները գողացել են ՀՀ Սյունիքի մարզի Կապանի Ճակատեն և Դավիթ Բեկ գյուղերի 3 ընտանիքի պատկանող 8 կով և 1 ցուլ. ՄԻՊ

Մասնավորապես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2021 թվականի օգոստոսի 3-ի ահազանգերով պարզել է, որ Սյունիքի մարզի Կապան համայնքի Ճակատեն գյուղի վարչական տարածքում՝ անմիջապես գյուղից մոտ 1 կմ հեռավորության վրա գտնվող արոտավայրում 2021 թվականի հուլիսի 26-ին արածացնելու են տարել գյուղի երկու ընտանիքին պատկանող 4 կովեր:

Կենդանիներն, արածելով, հասել են գյուղի վարչական տարածքում գտնվող «Յուրդեր» անվամբ արոտավայրը և մոտեցել աղբբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքին: Ըստ ահազանգերի՝ դրանից հետո աղբբեջանական զինծառայողները կենդանիներին կապել են իրենց հատվածում, թույլ չեն տվել վերադառնալ և, բնակիչները շուրջ 5 օր իրենց բնակելի տան դիմացի սարից հեռադիտակով տեսել են, որ կենդանիները գտնվում են «Ջամբար» կոչվող տարածքում, իսկ օգոստոսի 1-ի դրությամբ կենդանիներն արդեն անհետացել են:

Նշված դեպքից բացի, 2021 թվականի օգոստոսի 2-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ևս մեկ ահազանգ է ստացել այն մասին, որ ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Դավիթ Բեկ գյուղի բնակիչը գյուղի 3 ընտանիքի պատկանող 6 խոշոր եղջերավոր կենդանիների (1 ցուլ, 5 կով) 2021 թվականի հուլիսի 14-ին արածացնելու է տարել գյուղին պատկանող՝ շուրջ 1.5 կմ հեռավորության վրա գտնվող արոտավայր:

Գյուղի բնակիչը, կարճ ժամանակ հեռացել է արոտավայրից և վերադառնալուն պես հայտնաբերել, որ կենդանիներից 5-ը չկան, իսկ կովերից մեկը աղբբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող կողմից վերադառնում է՝ պարանը գլխին կապած (ինքը կենդանիներին առանց պարան է արածացնելու տարել):

Հեռվում նկատել է, թե ինչպես են աղբբեջանական զինծառայողները դեպի իրենց խորքը քշում կենդանիներին:

Նշված երկու դեպքերում էլ տեղի ունեցածի մասին բնակիչները տեղեկացրել են գյուղերի վարչական շրջանների ղեկավարներին:

Դեպքերի մասին տեղյակ են պահվել նաև ՀՀ Զինված ուժերի ներկայացուցիչները և ՌԴ սահմանապահները: Կենդանիների վերադարձման ուղղությամբ տարվող բանակցությունները օգոստոսի 3-ի դրությամբ արդյունք չեն տվել:

Ադրբեջանական զինծառայողները հրաժարվում են վերադարձնել կենդանիներին՝ պատճառաբանելով, թե նրանք իրենց մոտ չեն:

Այս տվյալները Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը հաստատել է Ճակատեն և Դավիթ Բեկ գյուղերի նշված բնակիչների, նրանց համազուգահեռների հետ առանձնազրույցներով, ինչպես նաև դա հաստատել են համայնքային մարմինները:

Ադրբեջանական զինծառայողների կողմից ՀՀ սահմանային բնակիչների պատկանող կենդանիների գողությունները, նրանց վնաս պատճառելն ունի պարբերական բնույթ: Նրանց անօրինական արարքները խախտում են ՀՀ բնակիչների սեփականության իրավունքը, այդ արարքներն ուղղված են անասնապահությամբ զբաղվելու և ընտանիքի եկամուտը վաստակելու հնարավորությունից զրկելուն:

Այս ամենն իր հերթին անվտանգությունից բացի, առաջացնում է սոցիալական բնույթի խնդիրներ, այդ թվում՝ լուրջ վնասներ է հասցնում ՀՀ սահմանային բնակչությանը:

Նշված դեպքերը հաստատում են, որ ՀՀ բնակչության պաշտպանության, իրավունքների երաշխավորման համար Սյունիքի և Գեղարքունիքի շուրջ անհրաժեշտ է ստեղծել անվտանգության գոտի:

Դա պահանջում է նրանց հեռացում ՀՀ սահմանային գյուղերի հարևանությունից և Սյունիքի համայնքների միջև ճանապարհներից:

Աղբյուրը՝ <https://hetq.am/hy/article/134136>

03.08.2021

Արավուսին սահմանակից 13 ադրբեջանական դիրքերում ինտենսիվ շինարարություն է.

Արավուս գյուղի վարչական ղեկավար Արգամ Հովսեփյան

Ադրբեջանցիներն ուժեղացված ինժեներական աշխատանքներ են իրականացնում Արավուս գյուղին սահմանակից 13 ադրբեջանական դիրքերում: Այս մասին այսօր՝ օգոստոսի 3-ին, լրագրողների հետ զրույցում հայտնեց Արավուս գյուղի վարչական ղեկավար Արգամ Հովսեփյանը:

«Մոտ մեկ շաբաթ է՝ ինտենսիվ շինարարական աշխատանքներ են իրականացնում: Մեզնից ադրբեջանցիները հեռու են մոտ 700 մետրով», - նշեց նա:

Գյուղի վարչական ղեկավարի խոսքով՝ այդ աշխատանքներում ներգրավված է մոտ 300 ադրբեջանցի:

Ա.Հովսեփյանը հավելեց, որ պատերազմից հետո GPS համակարգով ադրբեջանական կողմին է անցել արավուսցիներին պատկանող մոտ 64 հեկտար հողատարածք, որտեղ կային արտեր և արոտավայրեր, դրանցում այժմ ադրբեջանական դիրքեր են:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/656701.html>

03.08.2021

Տեղ համայնքում իրականացվող լայնածավալ աշխատանքներին կավելանա ևս մի քանիսը

Սյունիքի մարզի Տեղ համայնքում անցկացվել է անվտանգության հարցերով միջգերատեսչական խորհրդի նիստը, որի ընթացքում անդրադարձ է եղել համայնքի խնդրահարույց հարցերին: Այս մասին հայտնում են Սյունիքի մարզպետարանից:

Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շադունցը հանգամանորեն ներկայացրել է բոլոր բնակավայրերի ջրամատակարարմանը, ջրահեռացմանն ու ոռոգմանն առնչվող առկա խնդիրները, իսկ վարչապետի խորհրդական Ռոբերտ Ղուկասյանի գլխավորությամբ կայացած նիստին մի շարք հարցեր լուծում են գտել:

Մոտ 85 մլն դրամով Խնածախի խմելու ջրագծի կառուցումից բացի ընթացք կտրվի նաև ներքին ցանցի բարեկարգմանը: «Կարկաչուն» ծրագրի շնորհիվ ոռոգման ջուր կունենա մի քանի բնակավայր, իսկ «Վեռլիա Ջուր» ընկերության կողմից Քարաշեն և Արավուա բնակավայրերում կլուծվի խմելու ջրի ներքին ցանցի, դիտահորերի և ՕԿՋների հարցը:

Տեղի համայնքապետարանի կողմից «Վեռլիա Ջուր» ընկերությանը շինթույլտվությունն արդեն սրված է: Հրատապ ծրագրով կվերանորոգվի Տեղի և Կոռնիձորի ոռոգման ջրի ներքին ցանցը: Վաղատուրի դպրոցի սանհանգույցի բարեկարգման աշխատանքներն էլ կմեկնարկեն մոտ օրերս:

Աղբյուրը՝ <https://www.1lurer.am/hy/2021/08/03/%D5%8F%D5%A5%D5%B2-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B5%D5%B6%D6%84%D5%B8%D6%82%D5%B4-%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D6%81%D5%BE%D5%B8%D5%B2-%D5%AC%D5%A1%D5%B5%D5%B6%D5%A1%D5%AE%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AC-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%AF%D5%A1%D5%BE%D5%A5%D5%AC%D5%A1%D5%B6%D5%A1-%D6%87%D5%BD-%D5%B4%D5%AB-%D6%84%D5%A1%D5%B6%D5%AB%D5%BD%D5%A8/529640>

03.08.2021

Շուռնուխ և Որոտան բնակավայրերում բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման աշխատանքները ընթացքի մեջ են

Շուռնուխում և Որոտանում հետպատերազմական շրջանում բնակավայրերի բնակիչները, որպես առաջնահերթ խնդիր, համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանին ներկայացրել էին բնակարանաշինության հարցը, ինչին համայնքի ղեկավարն արագ արձագանքել էր:

Վազմաբնակարան շենքերի հիմնանորոգման աշխատանքները ընթացիկ են: Հիմնովին նորոգվում են համայնքային ենթակայության երկու շենքերը, որի արդյունքում բնակավայրերի 11 ընտանիք նոր բնակարան կունենա: Աշխատանքների ընթացքին հետևելու նպատակով՝ Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ Մենուա Հովսեփյանն ու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ Գարեգին Փարսյանը հերթական այցն էին կատարել Որոտան և Շուռնուխ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/GorisMunicipality/posts/4298112216949659>

03.08.2021

Աշնանը կունենանք Տաթևի-Աղվանի հարմարավետ ու նորոգ ճանապարհ

Ո՞ւմ է պետք ճանապարհը, որ դեպի տաճար չի տանում: Խորհրդային հայտնի ֆիլմից այս ձեւակերպումն էի հիշում, երբ հերթական անգամ այցելեցինք ճանապարհաշինարարներին: Կապան-Աղվանի-Տաթև ավտոճանապարհն էլ Աստծո տաճար է տանում, բայց հատկապես Աղվանի-Տաթև հատվածի առանձին կտորներ քարուքանդ ու դժվարանցանելի էին՝ վարորդներից նյարդեր ու ջանքեր պահանջող:

Անցյալ տարի վերջապես մեկնարկեց ռազմավարական նշանակություն ունեցող այդ ճանապարհի նորոգումը, բայց վերահաս պատերազմի պատճառով գործն անկատար մնաց...

Բարեբախտաբար, մայիսից վերսկսվել են այլընտրանքային համարում ունեցող այդ ճանապարհի (12,5 կմ երկարությամբ, փաստաթղթային ձեւակերպմամբ՝ Մ-2 Տաթև-Աղվանի-Մ2 (Սյունիք) ավտոճանապարհ կմ 25+000-կմ 37+500 հատվածի) հիմնանորոգումը: Այլընտրանքային այն առումով, որ հնարավորություն կտա շրջանցել Մ-2 Գորիս-Կապան ավտոճանապարհը:

Մեր այցելության օրը (հուլիսի 28) ճանապարհաշինարարները Տաթևի վանքի հարեւանությամբ անցնող մայրուղու վրա բետոնե կաղապարներ էին տեղադրում, որոնց վրա ազդանշանային սյուներ պիտի տեղադրեին:

Վանքի մերձակայքից սկսած ճանապարհի պաստառը թարմ է սեւագույն է, որից պարզվում է, որ այդ հատվածում ասֆալտբետոնի վերին շերտն են տեղադրել: Աշխատանքներն իրականացնում է «Բիլդեր Քոնսթրաքշն» ՍՊ ընկերությունը (հիմնադիր նախագահ՝ Ղուկաս Գրիգորյան), որը մինչև 2021 թ. փետրվար կոչվում էր «Վահագն Ե Սամվել» ՍՊԸ:

Ինչպես տեղեկացրեց ընկերության աշխույժ Արմեն Իսահակյանը, կատարել են 58 420 խորանարդ մետր հողային աշխատանքներ, որից 35 200 խորանարդ մետրը՝ հանույթ, 22 հազարը՝ լիցք: Ընդ որում՝ մի հատվածում կատարել են ութ մետր բարձրությամբ 60 մետրանոց ավելի լիցք՝ ապահովելով երթելեկելի հարթ ու դյուրին ճանապարհ: Նշյալ ճանապարհը, մեր զրուցակցի ձեւակերպմամբ, 11 իջատեղ (այլ խոսքով՝ մուտք) ունի՝ դեպի Աղվանի, Քաշունի (Մալդաշ), Բարձրավան, Տանձատափ, Սվարանց բնակավայրեր եւ մի քանի հանդամասեր:

Մեր զրույցին միանում է «Սուֆետ» ընկերության տեխնիկական հսկիչ Մայիս Օհանյանը՝ տեղեկացնելով, որ Տաթևի վանական համալիրի մոտակա բարձունքում (Մեւարանցի խաչմերուկի մոտակայքում) նախատեսվում է դիտակետ կառուցել: «Տաթևի համալիր այցելող յուրաքանչյուր ոք, մասնավորապես, զբոսաշրջիկները հենց այդ հատվածում են սիրում կանգ առնել ու դիտարկել համալիրը, նաև նկարվել, քանի որ լուսանկարը ստացվում է վանական համալիրի ֆոնին: Բացի այդ՝ հենց այդտեղից կարելի է հիանալ տարածքի գեղեցկությամբ: Բայց եթե գետինը չոր չի լինում, ուրեմն անհարմարություններն անպակաս են:

«Սուֆետ» ընկերությունն արտասահմանցիների հետ է համագործակցում: Երբ նրանց առաջարկեցինք ծրագրի մեջ ներառել դիտակետի կառուցումը, ըմբռնումով մոտեցան մեր նախաձեռնությանը եւ ընդառաջեցին: Բետոնապատ սալիկներով մայթանման հատված է լինելու, կայանատեղի եւ մուտքի ճանապարհ, անձրեւոտ եղանակին նկարվել ցանկացողները

չեն ցեխտովի: Գեղեցիկ նախաձեռնություն է, որ շուտով կյանքի կկոչվի», - մանրամասնեց մեր զրուցակիցը:

Մայիս Օհանյանը մեզ մի ուշագրավ տեղեկություն հայտնեց: Բանն այն է, որ մեծ չափեր ունեցող բեռնատարները Սատանի կամրջով չեն կարողանալու անցնել, եւ ծրագիր կա Սվարանցի մատույցներից ճանապարհ անցկացնել դեպի Սիսիանի Լծեն բնակավայրը (ներկայումս դրա նախագծային աշխատանքներն են կատարվում), որն էլ ձորերով կմիանա Մ-2 մայրուղուն:

Մեր այցելության օրը Տաթև-Աղվանի ճանապարհին 30-ից ավելի մարդ էր աշխատում, տասից ավելի մեծ բեռնատարողությամբ մեքենա ասֆալտ էր տեղափոխում. ընկերությունը մեքենասարքավորումների խնդիր չունի:

Անհրաժեշտ լուսանկարներ անելու եւ կատարված աշխատանքներին ամբողջապես ծանոթանալու համար երթելեկեցինք ընկերության հիմնանորոգած ճանապարհով:

Ինչեւէ, Կապան-Տաթև այլընտրանքային ճանապարհի Տաթև-Աղվանի հատվածն աշնանը կլինի հարմարավետ ու նորոգ:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/ashnany-kunenang-tate%D6%82-akhvani-harmaravet-u-norog-chanaparh>

Կազմեց Ս. Ալավերդյանը